XXIII

ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

№ 28 Հինգշաբթի, 16 Փետրուարի — 1883 – 1906 — Հինգշաբթի, 16 Փետրուարի № 28

Բաժանորդագինը պոստի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը 1 ր., համարը՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատանը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Գրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

1906

ՆՈՐ-ԴԱՐ

(ՔՍԱՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Այս 1906 թուին լոյս կը տեսնի քաղաքական-գրական ամենօրեայ «Նոր-Դար»-ը նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։

Ամբողջ ռուս կայսրութեան մէջ «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինն է 10 ր., վեց ամսուանը՝ 6 ր., ամսականը՝ 1 ր., համարը՝ 5 կ.։ Արտասահմանի բաժանորդը վճարում է տարեկան՝ 40 ֆրանկ, վեց ամիսը՝ 25 ֆրանկ։

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով, բառը 2 կ., առաջին երեսումը 4 կ.։ Շատ անգամ կրկնուող յայտարարութիւնների համար մեծ զիջումն։

Բաժանորդ գրւում են Թիֆլիսում՝ «Նոր-Դար»-ի գրասենեակում, Գրիբոեդովսկայա փողոցում, № 14.

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն՝ Тифлисъ, ред. „Норъ-Даръ“ կամ՝ Tiflis (Caucase), rédaction «Nor.-Dar».

—

Ծանուցումն.—Թերթիս խմբագիրը մի տարի առաջ Պետերբուրգում իրաւունք է ստացել ընդարձակելու թերթի ծրագիրը, տալով թերթի մէջ պատկերներ, և առանձին ծրագրով լոյս հանելու շաբաթական պատկերազարդ յաւելուած։ Հարկ ենք համարում ծանուցանելու՝ հէնց որ թերթի միջոցները ներեն, կըձեռնարկենք պատկերազարդ «Նոր-Դար»-ի հրատարակութեան և կուղարկենք «Նոր-Դար»-ի բաժանորդներին 10 րուբլի բաժանորդագնի հաշւում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.—Ո՞րն է արմատական դարմանը։
Պետական Դումայի գումարումը։
Հայ-Թրքական կռիւը։
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Գաւառ։ Ռուսիա։
Մեզ գրում են.—Բագուից։
Ժամանակակից հերոսները։
Սահմանադրական — ժողովրդապետական կուսակցութեան ժողովը։
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ։
Արտասահմանի հայ թերթերից։
ԹՂԹԱԿՑ.—Մեղրի։
ՔԱՂԱՔԱԿԱՆ.—Հակաեւրոպական շարժումը Չինաստանում։ Անգլիական պահպանողականները պատրաստւում են։
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։
ՏԵՂԵԿԱՏՈՒ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս, 15 փետրուարի 1906 թ.

ՈՐՆ Է ԱՐՄԱՏԱԿԱՆ ԴԱՐՄԱՆԸ

Աշակերտական յուզումները տարափոխիկ հիւանդութեան նման մեր մի ուսումնարանական հաստատութիւնից արագ քայլերով անցնում է միւսը։ Դեռ անցեալներն էր, որ հայ հասարակութեան մտքերն ու մամուլը զբաղուած էին Գէորգեան ճեմարանում առաջ եկած աշակերտական յուզումներով և, դեռ վերջնական եզրակացութեան չյանգած, ահա այսօր մամուլի ու հասարակութեան անաչառ դատաստանին են յանձնւում Երևանի թեմական ուսումնարանում ծագած՝ աշակերտների անբաւականութիւնները և դրանց առիթով խնամուածների ու խնամողների արած քայլերը։ Շատ խաղաղ վիճակի մէջ չէ գտնւում նաև տեղիս Ներսիսեան ուսումնարանը, համաձայն հասարակութեան մէջ այդ մասին շրջող վրդովեցուցիչ լուրերի։

Ինչ ասել կուզի, որ աշակերտական յորձանքոտ կեանքը, ուսումնարանական մթնոլորտն ինքն ըստ ինքեան պարարտ հող են ներկայացնում յաճախակի խոշոր ու մանր ընդհարումների՝ աշակերտների և ուսումնարանների վարչութիւնների միջև նոյն իսկ քաղաքակրթութեամբ մեզանից անհամեմատ բարձր կանգնած հասարակութիւնների մէջ։ Աշակերտական հասակն ամեն տեղ յախուռն է ու յանձնապաստան, իսկ նրան կառավարելու կոչուած իշխանաւոր մարմինն էլ շատ յաճախ տրամադիր է իւր խոշոր ու վճռական թերութիւնները չտեսնելու և պահանջուածից աւելի իրաւատէր հանդիսանալու։

Դրանով հանդերձ, չպէտք է մի վայրկեան իսկ ուշադրութիւնից վրիպեցնել այն կարևոր հանգամանքը, որ հաստատուն հիմունքների վրայ կանգնած որևիցէ ուսումնարանական հաստատութիւն, իմաստուն ձեռքով կառավարուող որևիցէ կրթարան անհամեմատ առաւել նուազ ենթակայ է աշակերտական հասակի առաջացրած փորձութիւններին ու յուզումներին։ Ուստի, մեկնման կէտ ընդունելով այս հայեցակէտը, վերոյիշեալ մեր երեք ուսումնարանական կարևոր հաստատութիւնների յարկի տակ ծագած անբաւականութիւնների վրայ չպէտք է նայել լոկ տղայական հասակին յատուկ պահանջկոտութեան տեսակէտից, որը հրապարակ է գալիս այսօր մի քաղաքում, վաղը մի ուրիշ քաղաքում, և այսպէս շարունակ։ Հայ ուսումնարանական կեանքի մէջ երևան եկած այս տխուր և վտանգաւոր երևոյթների պատճառները ենթադրուածից շատ աւելի խոր են և հետևանք ուսումնարանական գործի այն անկազմակերպ ու սխալ դրուածքի, որին վերջին ժամանակներս մատնուած են եղել մեր ուսումնարանները, բարձրագոյնից սկսած մինչև տարրական դպրոցները։

Եղել է մի շրջան, ուր կովկասեան հայութիւնը, հայ ինտելիգենցիան ամբողջովին կլանուած էր ուսումնարանական հարցով։ 1875—1885 թուականները կովկասեան հայ ուսումնարանական տարեգրութեան ամենափայլուն էջերն են ներկայացնում։ Տասը տարուայ կարճ ժամանակամիջոցում Կովկասի հայաբնակ քաղաքներն աներևակայելի արագութեամբ ծածկուեցին ուսումնարանների խիտ ցանցով, ստեղծուեց քիչ-շատ լուրջ պատրաստութիւն ունեցող ուսուցչական խումբ, հրապարակ եկաւ հայ մանկավարժների մի պատկառելի թիւ, ի մի բան՝ կովկասեան հայութիւնն ամբողջովին տարուած էր ուսումնարանական գործից և նա իւր այդ ծարաւին յագուրդ տալու համար կանգ չէր առնում բարոյական ու նիւթական զոհողութեան առաջ։

Սակայն ուսումնարանական այդ եռուն կեանքը որքան արագ էր բողբոջել, նոյնքան և արագ ու հիմն ի վեր քայքայուեց այն աննպաստ ու անհեթեթ հալածանքների հարուածների տակ, որոնք քաղաքական նպատակներով յարուցուած էին նրա դէմ կովկասեան անհեռատես իշխանութեան կողմից։

Կովկասեան հայութիւնը, որ 1893 թ. յետոյ, մի անգամ առ միշտ խաչ էր քաշել իւր ուսումնարանական գործի վրայ, հնարաւորութիւն է ունենում կրկին նրան վերադառնալու և նրանով զբաղուելու միմիայն անցեալ տարուայ բարձրագոյն հրովարտակից յետոյ, որով կովկասեան հայերին թոյլատրւում էր իւր սեփական ուսումնարաններն ունենալ և նրանց կառավարել շատ աւելի լայն հիմունքներով, քան Եանովսկին ու Զաւադսկին էին գծել։

Անցեալ տարուայ Բարձրագոյն հրովարտակը մեր առաջ նորից բացեց ուսումնարանական նոյն լայնարձակ հրապարակը, որը մենք մեր ոտքերի տակ ունէինք սրանից մօտ քսան տարի առաջ և որից հայ հասարակութիւնը լիապէս օգտուել է իւր ժամանակին։

Հայ ուսումնարանական քսան տարուայ լետարգիական այդ քնի շրջանը ժամանակի ընդարձակ տարածութիւն է։ Ժամանակի այդ տևողութեան ընթացքում, ընդհանրապէս առած, ուսումնարանական գործն ու մանկավարժական գիտութիւնը կրել են կարևոր փոփոխութիւններ, մինչդեռ կովկասեան հայը, զուրկ լինելով ուսումնարանական իւր բոլոր իրաւունքներից, խիստ քիչ է հետաքրքրուել հասարակական գործունէութեան այդ ճիւղով և այդ մասին պահպանել է այն միևնոյն կազմն ու աւանդութիւնները, որոնք քսան տարի սրանից առաջ, գուցէ, կազմում էին գիտութեան վերջին խօսքը։

Այդ իսկ պատճառով, անարդար խօսք ասուած չի լինիլ, եթէ յայտնենք, որ հայ երեք բարձրագոյն դպրոցների մէջ առաջ եկած վերջին աշակերտական խլրտումներն արդիւնք են մեծ մասամբ տասնեակ տարիների ընթացքում ուսումնարանական գործում մեր ունեցած անշարժութեան, ակամայ անգործունէութեան։

Մի հարևանցի ակնարկ մեր դպրոցական գործի ներկայ դրուածքի վրայ՝ շատ հեշտութեամբ կարող է մեզ համոզել այն բազմատեսակ ու կարևոր թերութիւնների, տխրողական պահանջների մէջ, որոնք նկատւում են ոչ միայն այդ երեք հաստատութիւնների, հապա մեր ամբողջ դպրոցական գործի վերաբերմամբ, որն անյետաձգելիօրէն պահանջում է հիմնական բազմակողմանի բարեփոխութիւն։ Այսպիսի արմատական վերակազմական գործ, այսպիսի մի խոշոր ու պատասխանատու աշխատանք, ոչ մի կասկած չի կարող լինել, շատ վեր է որևիցէ ուսումնարանի ուսումնական խորհրդի կամ հոգաբարձական կազմի ոյժերից։ Այդ խնդիրը վերաբերում է կովկասեան ամբողջ հայութեանը հէնց այդ պատճառով էլ նրան կարգադրողը՝ այդ ծանր գործի տակ մտնողը պէտք է լինի ամբողջ հայ հասարակութիւնը գործի պահանջներին գիտակ իւր ներկայացուցիչների միջոցով։

Տիրող անկերպարան վիճակին վերջ տալ, հայ ուսումնարանական գործի բարեփոխութեան գործը իւր ընդարձակ ծաւալով գլուխ բերել կարող է հոգևորականներից ու աշխարհականներից կազմուած խառն ժողովը միայն, որը ամենից շուտ կարող է հրաւիրուել հոգևոր կառավարութեան ձեռներէցութեամբ։ Այդ ժողովը, իւր ձեռքն առնելով ամբողջ գործը, պէտք է ուսումնասիրէ ու վերակազմէ այն հիմնովին, կանգնած, անշուշտ, կառավարութիւնից այդ մասին շնորհուած արտօնութիւնների վրայ։

Մինչև որ այդ արմատական բարեփոխութիւնը գլուխ չբերուի, մեր դպրոցական գործը չի կարող հասնել իւր բեղմնաւոր դառնալու բարձրութեան և արդարացնել այն բոլոր յոյսերը, որոնք դրւում են ուսումնարանական գործի վրայ ընդհանրապէս։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

(«Պետ. գործ.» հեռագիրը)

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶՆԵՐ ՍԵՆԱՏԻՆ

—

Առաջին։ «Ի նկատի ունենալով, որ նահանգների մեծամասնութեան մէջ շուտով վերջանալու են ընտրողական ցուցակները կազմելու նախապատրաստական աշխատանքները և այդ հիման վրայ ներկայումս արդէն պարզուած են, թէ երբ կարելի կլինի կատարել Պետական Դումայի անդամների ընտրութիւնները, հրամայում ենք Պետական Դումայի գումարումը նշանակել 1906 թուի ապրիլի 27-ին»։

Ստորագրուած է՝ «ՆԻԿՈԼԱՅ, 12 փետրուարի 1906 թ., Ցարսկոյէ Սելօ»։

Երկրորդ։ «1905 թ. դեկտեմբերի 11-ին տուած ուկազով Մենք Պետական Դումային մասնակցելու իրաւունք տուինք բնակչութեան նոր ընդարձակ դասակարգերի, ընդ սմին սահմանելով կանոններ, որոնք պիտի թեթևացնեն ուկազի համաձայն Դումայի անդամների ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ստացող ընտրողների լրացուցիչ ցուցակների շուտափոյթ կազմումը։ Ծագած յուզումներն ու խռովութիւնները և պոստային կանոնաւոր հաղորդակցութիւնների ընդհատումը սակայն խոչընդոտ հանդիսացան մի քանի նահանգներում այդ ցուցակները ժամանակին կազմելուն։ Այս պատճառով, որպէսզի չուշանայ Պետական Դումայի գումարումը, Մենք բարւոք համարեցինք փոխել Մեր սահմանած այն կանոնը, որի համաձայն Դումայի անդամների ընտրութիւնները բոլոր նահանգների և քաղաքների ընտրողական ժողովներում կատարւում են միևնոյն օրը, և թոյլ տալ սոյն ընտրութիւնները կատարելու զանազան ժամանակներ այդ բանը հնար եղած չափով, ուստի հրամայում ենք փոխել Պետական Դումայի հաստատման և ընտրութիւնների կանոնադրութեան գործադրութեան վերաբերեալ 1905 թ. սեպտեմբերի 18-ին Բարձրագոյնս հաստատուած կանոնների 34-րդ յօդուածը։ Ընտրութիւնները (յօդ. 3 և 5) կատարւում են Բարձրագոյն ուկազներով նշանակուած օրերը, որոնց մասին խնդրամատոյց է լինում Ներքին գործերի մինիստրը մինիստրների խորհրդի միջոցով։ Կառավարիչ սենատը սոյնը կատարելու համար պէտք է պատշաճաւոր տնօրինութիւնն անէ»։

Ստորագրուած է՝ «ՆԻԿՈԼԱՅ, 12 փետրուարի 1906 թ., Ցարսկոյէ Սելօ»։

«Русское Государство»-ի ասելով, մինիստրների խորհուրդը կանոնաւոր գտաւ Դումայի գումարումը նշանակել ապրիլի 27-ին, որպէսզի բացումից առաջ հնարաւորութիւն տրուի հաւաքուելու կարելոյն չափ մեծ թուով անդամների։ Մինչև այդ ժամանակ կարող են վերջանալ ընտրութիւնները ինչպէս Եւրոպական Ռուսիայի նահանգների և քաղաքների մեծամասնութեան մէջ, այնպէս և Լեհաստանի մի քանի նահանգներում։ Դումայի բացման ժամանակ ներկայ կլինի մօտաւոր հաշւով աւելի քան 350 անդամ—մի կազմ, որը կատարելապէս բաւական է պարապմունքների կանոնաւոր ընթացքի համար։

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՌԻՒԸ

—

Գնդապետ Լևիցկին զինաթափ է անում Ղազախի գաւառի բնակիչներին։ բոլոր խլուած հրացանները, փամփուշտներն ու գաշոյնները նա այրել է տալիս իրենց բնակիչների աչքի առաջ։

—

Ղազախի գաւառի Կրզան գիւղի հայերը, 108 հոգի, խնդրում են լրագրի մէջ խորին շնորհակալութիւն յայտնել պրիստաւի օգնական պ. Ռուտկովսկուն, որի եռանդի և կարգադրութեան շնորհիւ բոլոր 108 հոգին, կանայք, երեխաներ և տղամարդիկ, գտնուեցին գիւղերում, սայլերով բերուեցին անդրկովկասեան երկաթուղիների Թովուզ կայարանը, իսկ այնտեղից Թիֆլիս։ («Кав.»)

—

«Кав.»-ը հետևեալը կերպով է պարզաբանում Կրզան գիւղի աւերումը։ Այդ գիւղը շրջապատուած է գրեթէ բացառապէս թուրք գիւղերով. թուրքերը կրզանցի հայերին ձեռք չէին տալիս և շարունակում էին նրանց հետ հաշտ ապրել։ Բայց հայ զինուած խմբերից մէկի պարագլուխը յարմար էր համարել հէնց Կրզան գիւղում բանտ շինել, ուր պահւում էին թուրք գերիները կրզանցիներին անծանօթ զինուած մարդկանց հսկողութեան տակ։ Այս բանն իմանալով, Բոզալգանլու գիւղի թուրքերը զինուած խմբով յանկարծ վրայ տուին Կրզան գիւղին և ազատեցին գերիներին, որոնցից շատերը շղթայակապ էին։ Կռուի ժամանակ խաղաղ կրզանցիները փախան իրենց գիւղից, իսկ թուրքերը քարուքանդ արին ամբողջ Կրզանը, կողոպտեցին բնակիչների բոլոր կայքը և ապա ազատած գերիների հետ հեռացան։ Կրզանցի հայերը մեծ մասամբ փախան Ղազախ և ապա Թիֆլիս, իսկ փոքր մասն ապաստան գտաւ հարևան թուրք գիւղերում։ Այստեղից էլ անշուշտ ծագեցին այն լուրերը, թէ կրզանցի հայերից շատերը գերի են գտնւում թուրքերի մօտ, բայց իրենք հայերը, «Кав.»-ի ասելով, շտաբս-կապիտան Դոբրժանսկուն որ, ուղարկուած էր այդ գործի մասին քննութիւն կատարելու, բացատրել են, թէ իրենք ամենևին գերի չեն, այլ ընդհակառակն ապահով ապաստան են գտել իրենց հարևան թուրքերի մօտ։

Շատ բարի. հապա ինչո՞վ բացատրենք այն հանգամանքը, որ այդ «բարի» հարևանները կրզանցիների միրուքն ու եղունկները ներկել են հինայով և գլուխները խուզել ըստ թաթարականի։

Գնալով Բոզալգանլու գիւղը,— շարունակում է «Кав.»-ը,—կապիտան Դոբրժանսկին բացատրեց այնտեղի թուրքերին, թէ ինչ եղկելի և չքաւոր վիճակի մէջ են գտնւում անմեղ կրզանցիները, թէ որքան առհասարակ կործանարար են հայ-թաթարական ընդհարումներն երկու կողմերի համար էլ և այլն։ Նրա խօսքերն այնքան ազդեցին թուրքերի վրայ, որ նրանք հետևեալ խնդիրքն են ուղարկել՝

«Կովկասեան նորին պայծառափայլութիւն փոխարքայի ներկայացուցիչ կապիտան Իսկենդար-բէկ Դոբրժանսկուն Գանձակի նահանգի Ղազախի գաւառի Բոզալգանլու գիւղի հասարակութեան կողմից խնդիր։ Մեղաւոր համարելով մեզ Կրզան հայ գիւղի աւերման գործի մէջ և այս պատճառով խիստ զղջալով, որ այսպիսի գործ ենք կատարել, մենք ամենախոնարհաբար խնդրում ենք ձերդ բարձրապատուութեանը սոյն խնդրի հետ ներկայացրած փողը—750 րուբլի,—որ հաւաքել է մեր հասարակութիւնը, գործադրել յօգուտ հալածուած կրզանցիների նրանց ապրուստի համար։ Սրանով մենք ուզում ենք ապացուցել, որ արդարութեան, կարեկցութեան, բարեպաշտութեան, սեփական սխալմունքի գիտակցութեան և այդ սխալմունքի ուղղելու ձգտման զգացումները յատուկ են մուսուլման ազգին։—Բոզալգանլու գիւղի հասարակութեան լիազօրներ Քերբալայ-Նաջաֆ-Ալի-Հուսէյն-օղլի, Ամիրասլան-Իսկենդար-օղլի, Հաջի Ալէքպեր-Աղիգեօզալ-օղլի, Ասադ-Ելչի-օղլի, Ալիխան-Մահմադ-օղլի, Մահմէդ-Հուսէյն-օղլի, Գամբար-Մաշադի-Մուսա-օղլի։ Որովհետև վերոյիշեալ անձերն անգրագէտ են, ուստի նրանց խնդիրքով ստորագրեց Գամբար-Մաշադի-Մուսա-օղլի»։

—

Շուլաւէրից մեզ հաղորդում են, որ փետրուարի 13-ին, երեկոյեան ժամը 9-ին, Ղարայազի երկու թուրք են գնում այնտեղ տներ հրդեհելու չար դիտաւորութեամբ. գիւղի հայ պահապանները նկատելով նրանց ձայն են տալիս, բայց պատասխան չստանալով ընկնում են նրանց ետևից և մէկին սպանում. միւսին աջողւում է փախչել։ Իշխանութիւնն այժմ զինաթափ է անում Շուլաւէրի և միւս գիւղերի բնակիչներին։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԹԻՖԼԻՍ

Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսում և գաւառում զինուած մարդիկ յարձակւում են խաղաղ բնակիչների վրայ տների մէջ գոյքը թալանելու կամ յեղափոխական նպատակին նուիրաբերելու պատրուակով փող կորզելու համար, Թիֆլիսի և գաւառի ժամանակաւոր ընդհանուր նահանգապետը փետրուարի 12-ի յայտարարութեամբ ծանուցանում է, որ այսուհետև դիտաւորեալ սպանութիւնների, աւազակութիւնների, թալանի և փողեր կորզելուն համար յանցաւորները կը յանձնուեն զինուորական դատի և կը դատուեն պատերազմական ժամանակի օրէնքներով, որոնք յանցաւոր ճանաչուածներին դատապարտում են մահուան պատժի։ Ծանուցանելով այս մասին ի գիտութիւն ընդհանրութեան, ընդհանուր-նահանգապետն ընդ սմին հրաւիրում է բնակչութեանը, որ նա օգնի իշխանութեանը Թիֆլիս քաղաքն ու գաւառը մաքրելու զանազան տեսակ կողոպտիչներից և յարձակման ամենաաննշան փորձ եղած դէպքում անգամ դիմել անյապաղ զօրքերին և ոստիկանութեանը, որոնց հրամայուած է անպատճառ բանել ոճրագործներին, անհրաժեշտութեան դէպքում նոյն իսկ զէնքի դիմելով։

— Թիֆլիսի սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան բիւրոն Մոսկուայի Լազարեան ճեմարանի պրոֆեսորներ Խալաթեանին և Խախանաշվիլուն յանձնարարել է մասնակցել նոյն կուսակցութեան կեդրոնական կոմիտեի նիստին, որը նշանակուած է Մոսկուայում փետրուարի 19-ին Պետական Դումայի անդամների գաւառներում լինելիք ընտրութիւնների խնդիրը քննելու համար։

— Թիֆլիսի քաղաքային վիճակագրական բիւրօյի կառավարիչ Իշ. Երկայնաբազուկ-Արղութեանն սկսել է կազմել այն հրահանգների ծրագիրը, որոնք պիտի տրուեն Պետական Դումայի ընտրութիւններով ըղբաղուող Թաղային յանձնաժողովներին։ Ծրագիրը նախապէս կը քննուի քաղաքային խորհրդի նիստում։

— Գիւղական կալուածական բանկի բաժանմունքը Թիֆլիսում բացուեց երէկ, փետր. 15-ին։ Բաժանմունքի գործունէութիւնը տարածուում է ամբողջ Անդրկովկասի վրայ։

— Թիֆլիսում Պետերբուրգից տեղեկութիւն է ստացուած, թէ սրբազան սինոդում խնդիր է յարուցուած Վրաստանի էքզարխութիւնը վերացնելու և դրա փոխարէն արքեպիսկոպոսութիւններ ու եպիսկոպոսութիւններ հիմնելու Անդրկովկասում։

— Ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետը Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարին թոյլ է տուել քաղաքային խորհրդի հերթական նիստերը գումարել առանց ամեն անգամ թոյլտուութիւն խնդրելու այդ բանի համար, բայց ներկայացնելով իրեն ամեն մի նիստին քննուելիք առարկաների ցուցակը։

— Այս օրերս նորից բացայայտուած է, որ Վրաստանի հողեր վարչութեան մէջ Թիֆլիսում (անտառական գրասենեակ) նախկին գանձապահ Արզաղիանին վատնել է դարձեալ 7,000 ր. ռմբի թեմական գործարանի գումարներից։

— Թիֆլիսում հիմնուում է երաժշտական գործիչների փոխադարձ օգնութեան ընկերութիւն։ Մտադրութիւն կայ ընկերութեան կից հիմնելու երաժշտական դպրոց։

—Փետրուարի 19-ին նշանակուած է վաճառականների ընդհանուր ժողով, վաճառականների աւագ ընտրելու համար։

— Թիֆլիսի դատական պալատի պրոկուրոր Ալեքսանդրով-Դոլնիկով նշանակուում է Մոսկուայի դատական պալատի պրոկուրոր։

— Թիֆլիսի քաղաքային խորհրդի իրաւասու պ. Փասրեան քաղաքագլխի պաշտօնակատարին յայտնեց, որ փոխարքայի մօտ ծառայող կապիտան Դոբրժանսկին իրեն է յանձնել 750 ր., որ հաւաքել են Ղազախի գաւառի Բոզալզանլու թուրք գիւղի բնակիչները Հրդեհ վնասւած Թիֆլիս փախած հայերի օգտին։ Որովհետև պ. Փասրեանը չգիտէ, թէ որտեղ են ապաստանած կրդանցինները, ուստի խնդրում է քաղաքագլխի պաշտօնակատարին ընդունել այդ փողերը ըստ պատկանելոյն յանձնելու համար կամ ցոյց տալ փախստական կրդանցիների տեղը։

— Անդրկովկասեան երկաթուղիներն անցնում են զինուորական իշխանութեան իրաւասութեան տակ։

— Կովկասեան զինուորական շրջանի շտաբի նոր կառավարիչ գեն.-լէյտ. Շատիլովը փետրուարի 14-ին ժամանեց Թիֆլիս։

— Ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետի կարգադրութեամբ զինուորական դատի են յանձնուած Տիգրան Տոնեանց և իշխ. Դաւիթ Էրիսթով։ Առաջինը Ծիցիանեան զառիվայրի վրայ տարճանակը ձեռքին յարձակուել էր կառքով գնացողների վրայ կողոպտելու նպատակով, իսկ երկրորդը Գոգոլեսկայա փողոցում յարձակուել էր Ենֆիաճեանցի ծխախոտի գործարանի ցրիչի վրայ և վիրաւորել էր նրան նոյնպէս կողոպտելու նպատակով։

— Փետրուարի 13-ին, գիշերուայ ժամը 11-ին, Մէյջին փողոցում, Սոլաջովի քարվանսարայում իր սենեակի մէջ խեղդամահ է արուած երևանցի կօշկակար Հմայեակ Վարդանեան։ Խնուած է մի հայ երիտասարդ Թովմաս անունով, որը նոյն գիշերն սպանութիւնից առաջ Վարդանեանի մօտ է եղել։ Թովմասի ասելով, իր գնացած ժամանակ Վարդանեանի մօտ եկել են երկու խմբեր, որոնց յետոյ նա թողել է Վարդանեանի մօտ և ինքը դուրս եկել։

— Փետրուարի 12-ին Հայոց բազարում խուզարկութիւն կատարուեց Միրաքեանի խանութում և Ներիմանեանի տանը։ Ոչինչ չգտնուեց։

— Մինգրէլիան գնդի հրամանատարը կոմենդանտի վարչութեանը յայտնել է, որ այդ գնդի զինուոր Տիգրան Սամանեանց պահապան եղած ժամանակ փախել է, տանելով իր հետ հրացանը և 60 փամփուշտ։

— Անդրկովկասեան երկաթուղիների ժամանակաւոր կառավարչի կարգադրութեամբ արձակուած են դարձեալ 140 ծառայող, որոնք ըստ ազգութիւնների բաժանուում են հետևեալ կերպով. վրացի—105, ռուս—27, հայ—5 և թուրք—3 հոգի։

— Թոյլտուութիւն են խնդրում Թիֆլիսում ամենօրեայ լրագրներ հրատարակելու՝ բժ. Տ. Մ. Թադէոսեան—հայերէն լեզուով «Ալիք» անունով, Վ. Ի. Շալիկաշվիլի—վրացերէն լեզուով «Խմա» (Ձայն) անունով և տիկ. Շ. Ա. Դաւիդովա—ռուսերէն լեզուով «Кавказская Жизнь» անունով։

— Այս ամսի վերջը Թիֆլիսում պիտի սկսի լոյս տեսնել ռուսերէն մի նոր լրագիր «Впередъ» անունով։

— Սարիղամիշից Թիֆլիս հասաւ եկիսաւէտարանեան գնդի երեք բատալիօն և տեղաւորուեց Թիֆլիսի գնդի զօրանոցում։

— Փետրուարի 14-ից նորից սկսեց լոյս տեսնել «Нов. Обоз.» լրագիրը, որը դադարեցրած էր ընդհանուր-նահանգապետի կարգադրութեամբ յունուարի 25-ից։

—

ԲԱՔՈՒ

Նորին Մեծութեան Պալատի շտալմայստեր Վ. Ս. Տոլստոյ ուղարկուած է Բագու իբրև երկրիս բարձր իշխանութեան ներկայացուցիչ մասնակցելու համար այն առանձին խորհրդակցութեանը, որ տեղի պիտի ունենայ Բագուի նաւթարդիւնաբերական գործը վերականգնելու համար 20 միլիօն ռուբ. յատկացնելու խնդրի առթիւ։

— Փոթու գծի Արազա կայարանում փետրուարի 11-ի լոյս 12-ի գիշերն սկսուել էին հրդեհներ միաժամանակ երեք տեղից։ Այրուել են մօտ 30 խանութ։ Նոյն գիշերը Գուբերնայում կրակի ճարակ է դարձել Ձախաթաուրի տունը։

— Բորչալուի գաւառում, Մ. Արամեանցի կալուածքում, Ախթալա կայարանի մօտ, փետրուարի 10-ին տասնհերկու զինուած թուրքեր յարձակուել են Արամեանցի կալուածքում ծառայող Փարսադանեանի և Տէր-Մելիքսէթեանի վրայ և փորձել են մտնել Արամեանցի տունը, բայց յետ են մղուել Արամեանցի միւս ծառայողների օգնութեամբ։ Հրացանաձգութեան ժամանակ ծանր կերպով վիրաւորուած են թուրքերից երկուսը—Այրում գիւղացի Գիւլ-Մամէդ Հուսէյն-օղլի և Փիրվերդի Հասան-օղլի։

— Ղազախի նախկին գաւառապետ Արնոլդը, «Т. Л.»-ի ասելով, նշանակուած է Սղնախի գաւառապետ։

— Թիֆլիսի գաւառապետի աւագ օգնական Վոլնևսկի և Բորչալուի գաւառապետի աւագ օգնական Գեբաուէրը փոխադրուում են մէկը միւսի տեղ։

— Փոթում պաշարողական դրութիւն է մտցուած։ Սարսափահար բնակիչները փախուել են տներում և վախենում են փողոց դուրս գալ։ Այս պատճառով քաղաքագլուխը խնդրագիր է ուղարկել, որ պաշարողական դրութիւնը վերացուի։

—

ՌՈՒՍԻԱ

Գեն. Կուրոպատկինը շուտով վերադառնալու է Հեռաւոր Արևելքից և գնալու արտասահման բժշկուելու («Н.»)

— «Н. В.»-ն լսել է, որ նախ և առաջ պիտի մշակեն անձի և բնակարանի անձեռնմխելիութեան օրէնքները մինչև Պետական Դումայի բացուելը։

—Ներքին գործոց մինիստրի կարգադրութեամբ հետևեալ դադարեցրած երգիծաբանական հրատարակութիւնների խմբագիրները՝ «Знамя»-ի—Գուլչևի, «Зритель»-ի—Գինց, «Жупелъ»-ի—Գրժեբին, «Стрлы» Կնորոզովսկին և «Девятый Валъ»-ի —Եարցին նոյնպէս և վերջին թերթի հրատարակիչ՝ Զեպուրնոյ, այս օրերս պիտի աքսորուեն Պետերբուրգից և որպէս քաղաքական անյուսալի մարդիկ իրաւունք չպիտի ունենան մայրաքաղաքներում ապրելու։ Բայց որովհետև այս մարդիկ մեղադրուում են պետական յանցանքներում, ուստի պիտի մնան մինչև նրանց գործերի դատաւարութիւնը։ Կնորոզովսկին, որ մօտ օրերս արձակուած էր բանտից 10000 ր. գրաւականով, նորից ձերբակալուած է («Н.»)

— Տուկկումի քաղաքի ոստիկանութիւնը հեռագիր է խփել Պետերբուրգի խուզարկու ոստիկանութեանը, որ կալանաւոր է մայրաքաղաք փախած Տուկկումի նախկին քաղաքագլուխ Մ. Մ. Կլեմանսին։ Երբ սա անհետանում է, սկզբում դրա վրայ առանձին ուշադրութիւն չեն դարձնում, իսկ երբ սկսում են ստուգել քաղաքային գումարները, տեսնում են, որ 51083 ր. պակասում է։ (Н.)

— Գեն. Օրլովը Բալտիկ երկրում 259 մարդ է մահուան պատժի ենթարկել։

—«Слово»-ն հերքում է իր հաղորդած այն լուրը, թէ ֆինանսների մինիստրի օգնական Պաւլովը հրաժարուում է իր պաշտօնից։

—Լոնդոնից հեռագրում են «Веч. Гол.»-ին. «Ռէյտերի գործակալութեան հաղորդած լուրը Տիմիրեազևի հրաժարականի մասին։ Տիմիրեազևը դուրս է եկել կաբինետի կազմակերպութիւնից համախոհ չլինելով ընդհանուր քաղաքականութեան։ Կուտլեր և Տիմիրեազև մինիստրների հրաժարականը մեծ իրարանցում է յառաջ բերել Լոնդոնում։ Ըստ երևոյթին «New Iork journal»-ի Պետերբուրգի թղթակիցը, քաջ տեղեակ լինելով հանգամանքներին, հեռագրում է, որ Տիմիրեազևը գնացել է Ցարսկոէ Սելօ և անձամբ բացատրել իր հրաժարականի շարժառիթները, ասելով թէ շարունակ ճնշումներով չէ ուզում նպաստել Ռուսիայի կործանմանը։ Տիմիրեազևը խնդրել է, որ իրեն Պետական Խորհրդի անդամ չնշանակեն, որովհետև որպէս սահմանադրական կաբինետի անդամ հրաժարական տալուց յետոյ՝ նա մասնաւոր մարդ է դառնում։

—Ցարսկոէ Սելօյում,—ինչպէս հաղորդում են «Вѣкъ»-ին Պետերբուրգից,—բոլորովին հակուել են դէպի ձախ և մինչև անգամ գր. Վիտտէին հասկացրել են, թէ ժամանակ է արդէն քաղաքականութիւնը փոխելու։

—Նոյն լրագրին հեռախօսական գործակալութիւնը հետևեալն է հաղորդում մի քանի մինիստրների հրաժարականի մասին։ Մինիստրների խորհրդարանում տեղի ունեցած դէպքերը գրաֆ Վիտտէի ստեղծած սիստեմի տրամաբանական արդիւնքն են։ գրաֆ Վիտտէն, ստիպուած լինելով իշխելու, երբ իշխանութիւնն իր ձեռքին է, իր պրեմիերութեան առաջին իսկ օրից ձգտում էր բանակալ լինել և կատարեալ տէր դրութեան։ Զափազանց պատասխանատու կան հրամանքներին դիմադրութիւն ցոյց տալու նպատակով իր իսկ առաջարկած Դուրնովօի բնաւորութեան տէր և գր. Վիտտէի պէս բանակալական հակումներ ունեցող մարդ դուրս եկաւ։ Ահա այդտեղից ծագեց՝ նրանց մէջ խուլ, բայց յամառ կռիւ։ Արքունիքում տիրող խորհրդներ մեթոլորը նպաստեց այդ կռւին։ Մինիստրների խորհրդի միւս անդամները ընտրուած էին նոր մարդկանցից այն յոյսով, որ նրանք այնքան քաջութիւն չեն ունենալ խառնուելու պրեմիերի բոլոր գործողութիւններին։ Եւ, արդարև, երկար ժամանակ այդպէս էր շարունակւում։ Բայց նոր մինիստրներն ընտելացան, սկսեցին ըմբռնել գործերը և տեսան, որ իրենք շփոթմայի դեր են կատարում, և իրենց ետևում անտեսելի արհաւիրքներ են կատարուում։ Նոր՝ մինչև այդ ժամանակն անխօս մինիստրներն սկսեցին խօսել և ձանձրացնել երկու գլխաւորներին էլ զանազան հարցումներով։ Մինիստրները բաժանուեցին աջակողմեան և ձախակողմեան խմբերի։ Գր. Վիտտէն առաջ սկսեց աւելի դիւրագրգիռ լինել և վերջապէս շատ պարզ ակնարկներ անել, թէ ում որ հաճելի չէ, կարող է հեռանալ։ Ցարաբերութիւններն օր օրի վրայ վատանում էին, և Կուտլերի հեռանալը մի նշան էր միայն։ Զափազանց շատ ընդհարումներ են տեղի ունենում այդ ժամանակամիջոցում, և հասարակութեան ձայնը ճնշումների դէմ այնքան բարձր էր, որ իրենց յարգող պետական անձերը կարողանային այլ ևս համբերել իրերի այդ դրութեանը։ Ցայտարարութիւն են տուել հեռանալու մասին Տիմիրեազևը, գրաֆ Տոլստոյը, Նեմէշաևը, Ֆիլոսոֆովը (պետական կոնտրոլեօր). բացի նրանցից՝ հեռանալու են մինիստրների օգնականներից մի քանիսը։ Գր. Վիտտէի համար կարելի է ասել այս քայքայումը մեծ հարուած է։ Կասկած չկայ, որ նա չէ կարող անյապաղ նոր մինիստրներ գտնել, պէտք չլինի դեռ համակերպուել, խոչընդոտների յաղթել և այն էլ այն ժամանակ, երբ Պետական Դումայի ընտրութիւնների նախօրեակն է։ Լուրջ երկիւղ կայ, որ գր. Վիտտէն կարող է ընտրութիւնների հարցը յետաձգել, մինչև որ ինքը կկարողանայ մի յարմար կաբինետ կազմակերպել։ Այսօր լուր տարածուեց թէ գր. Վիտտէն չորրորդ անգամն է հրաժարւում, սակայն այդ լուրերին հաւատ պէտք չէ ընծայել, որովհետև գր. Վիտտէն իր բոլոր ճիգը կլթափէ իշխանութիւնը իր ձեռքում պահելու, մինչև որ Դուման կը բացուի։ Ցամենայն դէպս այս օրերս մեծ փոփոխութիւն կլինի։ Գր. Վիտտէն փորձ է անում պահել իր կաբինետում աւելի ազատամիտ մինիստրներին և, ինչպէս հաւատացնում է, նաև պատրաստ է զիջումներ անելու, միայն թէ կաբինետը փրկած լինի։ Այսօր խորհրդակցութիւն է դրա մասին, և այդ հարցը վաղուանից ուշ չի վճռուի։

—Սենատոր Կուզմինսկին ներկայացրել է իր կատարած քննութեան եզրակացութիւնը, որի հիման վրայ Օդեսայի նախկին քաղաքապետ Նէյհարդտը դատի է մատնուում։

—Պրինց Լուի Նապոլէոնն իր ազգականների հետ այժմ Իտալիայի Մոնկալիերի ամրոցումն է։ Նա վճռել է բոլորովին թողնել ծառայութիւնը ռուսաց զօրքում, որովհետև շատ դժգոհ է այն ոստիկանական դերից, որ տուել էին նրան Կովկասում հայերին և թաթարներին խաղաղեցնելու ժամանակ։

— Օրէնսդրական շրջաբերականով առաջարկուած է կառավարական հաստատութիւնների մեծամասնութեանն արձակել պաշտօնից այն ատրճանաւորներին, որոնք պատկանում են սահմանադրական - ժողովրդապետական կուսակցութեան։

—«Веч. Гол.»-ը հաղորդում է, թէ մինիստրների խորհրդին մասնակցողներից մէկն ասում է, իբրև թէ Կուտլերի հրաժարականը դեռ ևս յուզում է կաբինետի անդամներին։ Հաղորդակցութիւնների մինիստր Նեմէշաևի մեռանալը տակաւին վճռուած չէ, բայց յամենայն դէպս նա կլթողնի կաբինետը սինոդի օբեր-պրոկուրորից յետոյ։ Երեկ լուսաւորութեան մինիստր գր. Տոլստոյը երկար բանակցութիւն է ունեցել գրաֆ Վիտտէի հետ։ Գրաֆ Տոլստոյն ոչ մի զիջում չի ընդունում և կաբինետից նրա դուրս գալը համարեա թէ վճռուած է։ Տոլստոյի հետ կըհեռանան և նրա երկու օգնականը։ Գր. Վիտտէի և Դուրնովօյի յարաբերութիւնները չափազանց լարուած են, և վերջինիս հրաժարականը հաւանական է։ Բարձրագոյն շրջաններում նրանից շատ դժգոհ են։ Դուրնովօն խոստացել էր, որ հողատիրական անկարգութիւնները առաջը կառնի, մինչև Պետական Խորհրդի վերջին նիստում այն կարծիքն են յայտնել, որ հողատիրական անկարգութիւններն անխուսափելի են, որոնց առաջը միայն զէնքով կարելի է առնել, իսկ զօրքը շարունակ զինուած պահել անկարելի է։

— Մամուլի մասին շուտով նոր օրէնքներ են հրատարակուելու։ Այդ օրէնքների հիման վրայ,—ինչպէս իմացել է «Русь»-ը,—տպարանատէրերը պատասխանում են ներկայացնել գրաքննարանին այն բոլոր տպագրուած գործերը, որ լոյս պիտի տեսնեն։ Եթէ 24 ժամուայ ընթացքում ոստիկանութիւնը չեկաւ գրաւելու, տպարաններն իրաւունք ունեն լոյս հանելու և ազատուում են ամեն մի պատասխանատուութիւնից։ Գրաւման կարող են ենթարկուել այն գրուածքները, որոնց մէջ անպատկառութիւն կը նկատուի Ծայրագոյն իշխանութեան նկատմամբ և կոչ կլպարունակուի գոյութիւն ունեցող պետական կազմը տապալելու։ Այն գրուածքները, որոնց մէջ դրանք չեն լինիլ, գրաւման չեն էլ ենթարկուիլ, իսկ դատապարտելի յօդուածների հեղինակները դատական պատասխանատուութեան կենթարկուեն։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԲԱԳՈՒԻՑ.—Փետրուարի 2-ին, երեկոյեան, լուր տարածուեց, որ Սալաթեան գնդի սպաններից մէկը՝ Լ. Բարունաշվիլի անձնասպանութիւն է գործել։ Լուրը մեծ տխրութիւն՝ պատճառեց առանձնապէս հայ հասարակութեանը, որովհետև սա այն սպան էր, որն հոկտեմբերեան ջարդի և անոր հրկիզումների ժամանակ Կագիևի տնից ազատեց 70 հոգի հայեր, իր այդ մարդասիրական քայլով իր դէմ յարուցանելով կազակների և խուլիգանների զայրոյթը։ Իրենց երախտագիտութիւնն արտայայտելու համար հայերը մի ուղերձ մատուցին Բարունաշվիլուն և ճաշ տուին նրա պատուին պ. Ա. Գեօղակեանի ձեռներէցութեամբ։ Ճաշին մասնակցում էին 40 հոգի, որոնցից 15-ը Բարունաշվիլու ընկեր-սպաներ էին։ Վերջերս նրա բարեկամները նկատում էին, որ նա տանջւում է ինչ-որ ներքին հոգեկան ցաւից։ Պ. Գեօղակեանը, որ բաւական մտերմացել էր նրա հետ մի օր հարցնում է պատճառը։ «Ես լաւ եմ և պիտի լաւ եմ» — լինում է Բարունաշվիլու պատասխանը։ Այդպիսով էլ նա իր հետ գերեզման տարաւ իր վաղաժամ մահուան գաղտնիքը։ Ցամենայն դէպս նրա «անձնասպանութիւնը» խորհրդաւոր հանգամանք ունի, որը կաշխատենք երևան հանել առաջնէլուց յետոյ։

--

ԺԱՄԱՆԱԿԻՑ ՀԵՐՈՍՆԵՐ

IV

Մոսկուայում հրատարակուող «Нов. Дни» լրագիրը բերում է իր թղթակցի խօսակցութիւնը բարոն Մեդեմի հետ դեկտեմբերեան ապստամբութեան մասին։

Ի հարկէ,—ասել է բարոն Մեդեմը,—եղել են անգութ դէպքեր և անմեղ զոհեր, բայց դրութիւնն այնպէս էր, որ շատ էլ ժամանակ չկար քննելու։ Ահա ամենը զարհուրելով են խօսում Գրիգորև ուսանողի մասին, որ ձերբակալուեց և սպանուեց։ Գրիգորևին կանչել էր գնդապետ Մինը Պրոխորովսկի գործարանի բանուորների ցուցմունքով, որոնք համարեա բոլոր ագիտատորներին մատնել էին։ Եւ Գրիգորևը գնդակահարուեց, որպէս մեղաւոր դատապարտելի ագիտացիա անելու։

Պէտք է կարծել,—նկատում է այդ առթիւ պ. Վլադիմիրովը «Русь» լրագրում,—որ բարոն Մեդեմը Բարձրագոյն վարչական պաշտօն էր վարում այն ժամանակ Մոսկուայում և, մասնաւորապէս անելով թղթակցին լրագրական չափազանցութիւնների մի արտակարգ օրինակը, քաջ տեղեակ է ուսանող Գրիգորևի մեղաւորութեանը։ Ապաքէն նա չէր խօսիլ, որովհետև լաւ գիտէ, որ նրա խօսքերը թաչելու են համայն Ռուսիան և արձագանք են գտնելու այն խռովայոյզ սրտերում, որոնք թափած արեան մի որևէ արդարացումն են որոնում։

Ամենքին անհաւատալի է թւում, թէ կարելի է անմեղ մարդկանց սպանել... Ամեն մէկը կամենում է մի որևէ մեղաւորութիւն գտնել, զէթ անորոշ, թաքուցեալ, բայց որ լինի կամ գոնէ ենթադրուի լինին որ սպանուածը կարող էր այդպիսի մեղաւորութիւն ունենալ։

Եւ ահա Մեդեմը բացատրում է, թէ Գրիգորևը մեղապարտ էր յանցաւոր ագիտացիայում։

Այժմ լսենք, թէ ինչ է ասել Մոսկուայի մի ուրիշ, աւելի բարձր ադմինիստրատոր՝ ծովակալ Դուբասովը։

Դուբասովն ասել է, թէ ուսանող Գրիգորևն անպարտ է և պիտի ազատուի։ Այդ որոշումը կարդացել է և իր ձեռքով ստորագրել հանգուցեալ ուսանող Գրիգորևը բանտից ազատուելուց առաջ և, ենթադրելով որ ազատութիւն է ստանում, գնալու է իրենց բնակարանը. . ուղարկուել է Մինին գնդակահարուելու համար։

Որպէս գի բարոն Մեդեմը չկարծի, թէ ես անհիմն եմ խօսում, ապացոյց կբերեմ վկայաթղթեր և վկաներ։

Իւր որդու անդառնալի կորստեան պատճառով անմխիթար խորին վշտի մէջ՝ սպանուած ուսանողի հայրը, Միխայիլ Քսենոֆոնտովիչ Գրիգորևը, քաղաքային փոստով նամակ է ուղարկում Դուբասովին մօտաւորապէս հետևեալ բովանդակութեամբ «Ինչու համար դուք սպանեցիք որդուս նա բոլորովին անպարտ էր, մասնակից չէր և ոչ մի դատապարտելի կազմակերպութեան, մինչև անգամ ուսանողական ժողովները, միտինգները չէր յաճախում։

«Ես ձեզ ասում եմ ոչ որպէս մի հայր, որ անդառնալի կորուստ է ունեցել, այլ որպէս իմ որդու մտերիմն ու ընկերը, որ ճանաչում էր նրա հոգին, նրա մտքերը, նրա զգացմունքները։

«Եկէք, ծովակալ Դուբասով, անյապաղ եկէք ինձ մօտ, ես ձեզ սպասում եմ. դուք պիտի ասէք, ինչու համար որդուս սպանեցիք։

«Ձեզ եմ դիմում, որպէս մի տանջուած, հիւծեալ մարդ, որ կամենում է, որ դուք ձեր պատասխանով գէթ մի վայրկեան թեթևացնէք իմ տանջանքների երկունքը։ Լսում էք, եկէք»...

Եւ արդարև, նամակից յետոյ՝ մի քանի օր անցած, Գրիգորևի բնակարանն է գալիս, ծովակալ Դուբասովի կարգադրութեամբ, նրա օգնական իշխ. Վոլկոնսկին, և ցոյց տալիս սպանուածի հօրն ու մօրը այն թուղթը, որի մէջ ասուած է, թէ ուսանող Ա. Մ. Գրիգորևն անպարտ է և պիտի ազատուի բանտից։ Թղթի մի կողքին որդու ստորագրութիւնն է. «Կարդացի Ա. Գրիգորև»։

Մայրն ընդունեց, որ որդու ձեռքն է։

— Եթէ այդպէս է, ապա ինչու է նա սպանուած,—գոչեց հայրը։

— Դժբաղդ պատահմունք է,—հանգստացնելով պատասխանեց իշ. Վոլկոնսկին։—Երբ բանտից նա դուրս է գալիս, գնդակը դիպչում է նրան և մահացու վէրք տալով՝ տապալում։

Մայրը լուռ մօտեցաւ անկիւնին, ուր սպանուած որդու վերջին յիշատակն էր—նրա տուժուրկան, և առանց մի խօսք ասելու փռեց իշխանի առաջ։

Այդ շորը 14 ծակ ունէր, իսկ ձախ կողմը ստուարապէս պատառուած։

Իրօք ոչ թէ մի, այլ 14 գնդակ էին կպել նրա կրծքին ու փորին և սուինի մի հարուած, որոնցից ուսանող Գրիգորևը մեռել էր։

Իշ. Վոլկոնսկին պատասխանելու ոչ մի խօսք չէր գտել։

Առանց մի խօսք ասելու, առանց հակաճառութեան այդ սարսափելի համր տեսարանից յետոյ նա հաւաքում է իր թղթերն և գունատուած, այլայլուած հեռանում...

Ի հարկէ, իշ. Վոլկոնսկին այս բոլորը պատմած կլինէր ծովակալ Դուբասովին, նա էլ ուսերը վեր քաշած կլինէր այդ տխրալի թիւրիմացութեան պատճառով և, անկասկած է, վճռած կլինէր թողել այդ գործը, —չէ՞ որ տրամադրութեան ընտանիքին վերադարձնել կորցրած որդուն անկարելի է։

Սակայն հասարակութիւնը ծովակալ Դուբասովը չէ. նա հանգիստ մնալ չէ կարող. նա չէ կարող ապրել այն գիտակցութեամբ, որ իւր կողքին, իւր իսկ մէջ նաև նոյն ադմինիստրացիայի կողմից բոլորովին անպարտ ճանաչուած մարդկանց աչքարա յանցաւոր սպանութիւններ են տեղի ունենում, իսկ մարդասպաններն ոչ միայն անպատիժ են մնում, այլ գուցէ և պարգևատրուած են։

Ինչպէ՞ս է պատահել, որ ոչ մի յանցանք չունեցող երիտասարդ Գրիգորևն, որ ազատութիւն է ստանում, 14 գնդակի և մի էլ սուինի հարուած է ստանում և մեռնում է։

Ո՞վ սպանեց նրան, որի՞ հրամանով։ Ովքե՞ր են նրան սպանողները։ Դիակը ոստիկանատունը տուեց։ Ի՞նչպէս է այդ դիակն ընկել այնտեղ։ Աւելի քան դիւրին կլինէր քննութիւն անելը—չէ՞ որ ճանաչուկ չեն սպանել։

«Մոլվա»-ի 8-րդ համար- գետեղուած էին մի ականատեսի ցուցմունքներն այս սարսափելի դէպքի զարմանալի հասարակ հանգամանքների մասին։ «Հարցուփորձ սկսուեց։ Մի խմբում այդ անում էր վերոյիշեալ սպան, բայց միւսում սկզբում մի ինչ-որ գնդապետ էր, իսկ յետոյ մի կոնծած սպայ սպիտակ խաչը դոշին։ Բոլոր ձերբակալուածներին երեք խմբի բաժանեցին. 1) ձախակողմեան անհնակը—մահ էր, 2) աջակողմեան —անորոշ, 3) խումբը պիտի գանակոծուէր։ Ազատւում էին միայն նրանք, որոնք իրենց գլուխը պրծացնելու համար 2—3 վկայ էին ցոյց տալիս։ Այստեղ սոսկալի տեսարաններ կարելի էր գիտել. ինժեներական ուսումնարանի ջահել ուսանող Ալէքսէյ Գրիգորևը, 19 տարեկան, առանց որևէ պատճառի էր ընկել այդտեղ։ Հօր հետ անցնելիս է լինում Պրէսնայի ոստիկանատան մօտից։ Նրան բռնում են, իսկ հօրը ոչ։ Նրա հետ խօսելուց ես այն տպաւորութիւնը դուրս բերի, որ դեռ շատ ջահել է։ Ցանկարծ դուրս է պրծնում մի ինչ-որ բանուոր և ասում. «Սա է մեր գլխաւոր հռետորը»։ Եւ նրան տարան ձախակողմեան անհնակը»։

Այսպէս՝ մարդուն տարել են և գնդակահարել. գնդակահարել են մի անմեղ մարդու, որին նոյն իսկ ադմինիստրացիան անմեղ է ճանաչել և գնդակահարել են մի լրտեսի սուտ ցուցմունքի հիման վրայ։

— Ո՞վ է այդ արել։

Անհրաժեշտ է քննել այդ գործը։ Միթէ հասարակութիւնը կարող է ապրել այն գիտակցութեամբ, որ կառավարութիւնից նշանակուած կառավարչական իշխանութիւնն ակներև ոճիրներ է գործում և ինքն էլ ծածկում է այդ ոճիրները. որ իշխանութեան այդ ոճիրներից ոչ ոք ապահովուած չէ ոչ այսօր, ոչ էլ վաղը. որ նրանք ոտնահարել են բարոյականութեան ամենատարրական օրէնքները, առանց որոնց՝ ամենքին այդ զգում են, ապրել անկարելի է։ «Нов»

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Փետրուարի 3-ին Պետերբուրգում կայացել է սահմանադրական-ժողովրդապետական կուսակցութեան (ժողովրդի ազատութեան կուսակցութեան) ժողովը Կեդրինի նախագահութեամբ։ Առաջինը խօսել է պրոֆ. Գրիմմը կուսակցութեան քաղաքական ծրագրի մասին։

«Երկարատև կռւից և սարսափելի զոհեր տալուց յետոյ, ասել է նա,—վերջապէս հասարակութիւնը Պետական Դումայի համար ընտրութիւններ անելու իրաւունքն ստացաւ։ Տասնեակ տարիների ընթացքում կառավարութիւնը յամառութեամբ հեռացնում էր հասարակութիւնը պետական գործերին մասնակցելուց։ Նա կարծում էր, թէ ինքը կարող է կառավարել գործերը։ Հետևանքն այն է, որ ժողովուրդը բոլորովին աղքատացել է, երկրի տնտեսութիւնն աւերուել։ Այնուամենայնիւ կառավարութիւնը վախենում է Դումայից, այդ պատճառով դասակարգային ընտրութիւններ է սահմանում, ամեն կերպով աշխատում է վատացնել նրա կազմակերպութիւնը և վերջապէս շարունակ ձգձգում է Դումայի գումարումը։

«Ընկերութեան նպատակն է պնդել, որ Դուման շուտ կանչուի, և նաև ամեն միջոց գործ դնել, որ Դումայի համար լաւագոյն մարդիկն ընտրուեն և ընդ նմին ժողովրդի իսկական ներկայացուցիչները։ Այդ պատճառով մենք պիտի միանանք, որովհետև ոյժը միութեան մէջ է։ Երբ մենք պարզում ենք, թէ ինչ բանի ենք ձգտում, մենք միանում ենք կուսակցութեանը, իւրացնելով նրա հիմնական խնդիրներն և ապա ամբողջապէս հպատակուում ենք նրա կուսակցական կարգապահութեանը։

«Պէտք չէ մոռանալ, որ բոլոր կուսակցութիւնների համերաշխութեան շնորհիւ տրուեց հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։ Մանիֆեստից յետոյ պառակտումն ծագեց։ Մի քանիսները կառավարութեան յարուեցին, միւսները նոր պահանջներ արին նրան և դիմեցին զինեալ ապստամբութեան։ Այդ ծայրայեղ դրութիւնների միջև մեր կուսակցութիւնը միջին տեղն է բռնում։

«Կառավարութիւնից մենք ոչ թէ խօսք, այլ գործ էինք պահանջում, մենք պահանջում էինք, որ Դուման գումարուի հանրային ընտրողական սկզբունքի իրաւունքով, բայց հակառակ էինք զինուած ապստամբութեան։ Կուսակցութեան նպատակները պետական կազմութեան նկատմամբ այն է, 1) որ պետական իշխանութիւնը կեդրոնացած լինի Դումայի մէջ եղող

ժողովրդի ձեռքում ժողովրդապետական իշխանութիւն և 2) որ մինիստրութիւններն ստորադրուեն ժողովրդի ներկայացուցիչների կամքին:

«Մենք պաշտպանում ենք հանրային, անմիջական, հաւասար և գաղտնի ընտրողական իրաւունքը: Պէտք է այնպէս անել, որ եթէ պալատի մեծամասնութիւնը վստահութիւն ցոյց չտայ, մինիստրները հրաժարուեն: Մենք կըպաշտպանենք ազատ ամբոխի խնկական շահերը:

Գալով կուսակցութեան անտեսական ծրագրին, ճառախօսն ասել է. «Ամեն բան ժողովրդի համար և ամեն ինչ ժողովրդի միջոցով»:

Գլխաւորապէս հռետորը կանգ է առել ութը ժամ աշխատելու և հողատիրական հարցերի վրայ: Ինչ վերաբերում է առաջին հարցին, նրա կարծիքով, յեղափոխական ճանապարհով անց կացնել չի լինիլ: Նրա լուծումը կախուած է երկրի արդիւնաբերութեան զարգանալուց: Եթէ մի անգամից ութ ժամ նշանակուի աշխատելու համար, շատ ձեռնարկութիւն կըստիպուին վնասուելուց, և բանուորների ահագին քանակութիւն բոլորովին առանց փողի կըմնայ: Եւ մենք ձըգտում ենք, որ աշխատանքի ժամերի թիւը կամաց կամաց կըճաստուի՝ առանց վնասելու արդիւնաբերութեան: Հաւասարապէս մենք չենք կարող պահանջել՝ ի նկատի առնելով երկրի աղքատութիւնը, որ անյապաղ վերացուեն կողմնակի հարկերը, թէև նրանց անարդար լինելն ակներև է: Կառավարական ֆինանսական եղանակն այնպէս է, որ նա աղքատից աւելի է վերցնում: Իսկ մենք պիտի աշխատենք, որ հարկը յառաջադիմական-եկամտային լինի:

Ինչ վերաբերում է հողատիրական հարցին, ի հարկէ գիւղացիների դրութիւնն այլևս այդպէս մնալ չէ կարող: Գիւղացիներին բաւարարութիւն տալու համար պէտք է թոյլատրել, որ հողերն ստիպողաբար վերցնուին տէրերից, բայց միւս կուսակցութիւններից զանազանուելու համար մենք պահանջում ենք, որ հողերի համար վարձատրութիւն տրուի: Մեր կուսակցութեան հաւասարապէս խորթ է թէ ամեն բան պահպանելն և ամեն բան մի անգամից կործանելու ձգտումը. միայն միջին ճանապարհըն է տանում դէպի յառաջադիմութիւն, այսպէս է աւարտել իւր խօսքը հռետորը:

Բացի նրանից այդ ժողովում խօսել են ևս 21 մարդ:

Առաջինը խօսել է Խլոպովն և մատնանիշ արել, թէ սխալ գաղափար են կազմել հոկտեմբերի 17-ի համաժողովի մասին, կառավարական կուսակցութիւն համարելով: Իւր վերջին նիստում, յունուարի 29-ին, նա բառերը բողոք է յայտնում կառավարութեան արած բանութիւնների դէմ. երբ ժողովներն արգելուած էին, առաջինը նա եղաւ, որ ժողով անելու իրաւունք ստացաւ: Բայց նա այդ իրաւունքից չօգտուեց, մինչև որ միւս կուսակցութիւններն էլ չստացան նոյնը: «Իսկ դա չէ կարող վկայել նրա յետադարձութիւնը»,— իւր խօսքն այդպէս է աւարտում հռետորը:

Նրան պատասխանել է Բորիսեւ:

—«Ես պատասխանեմ պ. Խլոպովին, թէ ինչու մենք հոկտեմբերի 17-ի կուսակցութիւնը կառավարական կուսակցութիւն ենք համարում, հետևապես և մեր հակառակորդը: Հոկտեմբերի 17-ի միութեան ժողովի բանաձևում ասուած է.«Միութիւնն առաջարկում է կառավարութեանը դառնալ հոկտեմբերի 17-ին արձակած մանիֆեստի ճանապարհը»: Այսպէս ուրեմն, ոչ թէ բողոք է յայտնուած, այլ միութիւնն առաջարկում է խընդրել, աղել: Ումի՞ց խնդրել: Այն կառավարութիւնի՞ց, որ վրդովեցուցիչ ժանութիւն է կատարում: Եւ կարելի՞ պ արդեօք նրանից սպասել, որ նա ժողովրդի կեանքն ու իրաւունքները պաշտպանէ: Բացի դրանից միութիւնը յաւել յիշել, թէ ինչպէս իւր ներկայացուցիչներից մէկը Մոսկուայում մոխայտնի անձի կենացն առաջարկեց, որն նա «մեր առաջնորդն» անուանեց: Ահա, թէ ինչու միութիւնը մեր հակառակորդն է: Ռուսիայի ազատագրական շարժման մէջ այդ միութիւնն առաջապահ չէ, այլ առաջապահ է այն թարգմանց մէջ, որոնք բացի հոկտեմբերի 17-ի մանիֆեստից աւելի ոչինչ չեն ուզում տալ: Մեզ հարցնում են, թէ մենք ինչու ենք գնում Դումա: Դումայի դէմ առաջին բողոքը մենք արինք: Մենք գիտէինք, որ ներկայացուցչական գործը շատ անհեթեթ է կազմակերպուած, այնպէս է կազմակերպուած, որ հերքէ ընդհանուր ընտրողական իրաւունքը: Եւ մենք տասում ենք. մենք գնում ենք Դումա ընդհանուր ընտրողական իրաւունք պահանջելու: Դումայի միջոցով դուք ամեն բանի կըհասնէք. Այդ պահանջը չի զրուել փոքրամասնութեան կողմից, գոնէ ես այդպէս եմ կարծում: Եթէ դուք ուժ ունիք Դուման բոյկոտի ենթարկելու, ապա կարող էք մեծամասնութիւն կազմել այնտեղ: Եւ աւելի լաւ է, որ դուք պատերազմ կնացող մարդիկ ունենաք, քան թէ չէզոքներ: Ով որ ընտրութիւններից հեռու է կանգնում, նա դէպի աջ է թեքւում: Եւ պէտք չէ մոռանալ, որ Դուման առանց անել չեն կարող: Ոչ մի կառավարութիւն, ինչ մարդկանցից էլ բաղկացած լինի նա, Դուման արհամարհել չի կարող: Գիւղացիները նրանից շատ բան են սպասում, և ասել ամբոխին, Դումա չի լինիլ, չէ կարելի: Բայց եթէ նա բաղկացած լինի սև հարիւրեակներից, փոքրամասնութեան կողմում կըլինի ժողովրդի մեծամասնութեան գիտակցութիւնը: Կամ Դուման պիտի պաշտպանէ ժողովրդի շահերը, կամ թէ ժողովուրդը նոր ներկայացուցիչներ կուղարկէ այնտեղ: Դուք, պարոններ, անհաղորդ մնալով Դումային, ձեր սրբութեան մասին էք մտածում և ոչ թէ ժողովրդի շահերի»:

ՄՕՄՈՒԼԻ ՑՈՒՐՋԸ

«Полярн. Звѣзда»-ի մէջ Վ. Օստրոգորսկին իւր «Բարոյական գիլյիոտին» խորագրով յօդուածի մէջ ներկայ տագնապալից րոպէի, մասնաւորապէս անհատի անձեռնմխելիութեան սկզբունքի ոտնահարուելու ամբողջ յանցանքը գտնում է ծայրայեղ կուսակցութիւնների հետևած տակտիկայի մէջ:

Ծորոայլն իրաւունքը, բացարձակ բիւրոկրատական բռնակալութիւնը պետութեան մէջ և ընտանեկան անկրթութիւնը, դրանց վրայ, անշուշտ, աւելացնելով նաև Բեզորրագովի անխղճահանկանութիւնը՝ համերաշխ ջանքերով ռուսական միջավայրում ծնունդ են տուել անյարգութեան դէպի անհատի իրաւունքներն ու նրան դարձրել ռուսական հասարակական կեանքի հիմնական օրէնքներից մէկը: Այդ բանը հրապարակ է գալիս ամեն մի ժամ, ամեն մի րոպէ, և փոքրի, և մեծի մէջ, և սալոններում, և յետին գինետներում, և դիւանատներում, և միտինգներում, և կաբակում, և լրագրական խմբագրատներում: Թէև արևմտեան Եւրոպայումն ևս ոչ ամեն տեղի համար կարելի է ասել, թէ յարգանք դէպի անհատի իրաւունքները, բառիս բովանդակ նշանակութեամբ առնելով, միանգամայն վերականգնած է: Սակայն, այնտեղ գոնէ քաղաքաքաղաքակրթութեան արտաքին փայլըն ու հանրային կրթութիւնը լըցնում են դէպի անհատն եղած ներքին համոզմունք դարձած յարգանքի պակասորդն արտաքին վարուելակերպութեամբ: Իսկ մեզանում այդքանն էլ չկայ: Անհատի իրաւունքներից ամենահիմնականը, տարբեր կերպով մտածելու իրաւունքը, մեզանում դեռ բոլորովին էլ չի ճանաչուած: Այդ երևոյթի երևան գալը կրթութիւնից զուրկ և առուածաբանական ատաւիզմով տոգորուած շրջաններում բաշխուում է թշնամական վերաբերմունքի: Այդ միջավայրի կրթութեան բովից անցած կրքոտութիւնը, ուրիշ խօսքով՝ նրա վայրենաբարոյութիւնը իւր ամբողջ ոյժով խորտակում է տարբեր մտածողի ոչ միայն կարծիքի, հապա նրա ամբողջ էութեան վրայ: Սովորական ժամանակներում արդէն շատ մեծ բարձրութեան վրայ չկանգնած դէպի անհատն եղած յարգանքը մեր կեանքի ներկայ պայմանների տակ բոլորովին էլ ընկաւ: Շահերի ու կրքերի հսկայական ընդհարումը և ժողովրդական մասսաների քաղաքացիութեան ասպարէզ իջնելը դէպի անհատն եղած յարգանքը հասցրին իւր նուազագոյն աստիճանին, մանաւանդ այն մարդկանց հանդէպ, որոնք ժողովրդի իրաւունքի պաշտպանների դերն են ստանձնել և կարծում են, թէ իրաւունք ունեն այդ բանն իրենց մենավաճառութիւնը դարձնելու:

«Ի խաչ հան զդա» աղաղակը, որ սրանից մօտ հարիւր տարի առաջ լսուեց Պարիզում և որն այնքան առատ նիւթ մատակարարեց ֆրանսական գիլյիոտինին, սկսած ժիրոնդիստներից և ապա աւելի ու աւելի դէպի ձախակողմը հակուելով, ժողովրդի բոլոր շրջաններից խլում էր մարդկային անհամար զոհեր: Դա այն միևնոյն գիլյիոտինն է, որն արդէն հաստատուել է մեզանում և գործում է, թէև ոչ յեղափոխական հողի վրայ, և կամ մարդկային արիւնհեղութեամբ... Ահա, այս ինչ-հրապարակախօսի գրած յօդուածին համաձայն չենք, նա յանցապարտ է, դաւաճան է: Մի ուրիշ հասարակական գործիչի յայտնած կարծիքը մեզ ծուռն է թւում,—նա կառավարական գործակալ է...

Եթէ ծայրայեղ տարրերի անհամբերատարութիւնը կարճ ժամանակի ընթացքում և սահմանափակ գործունէութեան մէջ այդքան զգալի է եղել, հապա ո՞րքան հսկայական ու դատապարտելի է այն անհամբերատարութիւնն ու անհատի իրաւունքների բացարձակ բռնաբարումը, որը դարեր է մաշել և ապառաժի նման ծանրացել է ժողովրդի խղճի վրայ: Օստրոգորսկու ու իւր նմանների աչքին երևում է միայն ծայրայեղների բարոյական գիլյիոտինը, իսկ այն կուռ շղթաները, որոնցով կաշկանդուած են եղել ռուս քաղաքացու մարդկային ամենահասարակ իրաւունքները, —նրանք չեն ուզում տեսած լինել: Սակայն, եթէ վնասակար է համարւում մէկը, այն ժամանակ բիւրոկրատիայի բացարձակութիւնը մի րոպէ անգամ շնչելու իրաւունք չունի... Բայց նա ոչ միայն շնչում է, հապա շատ էլ զօրեղ է դեռ, շնորհիւ Օստրոգորսկիների ու իւր նմանների:

***

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՈՒՐԻՕԶՆԵՐ

Մանիա Գրանդիոզա.—Քութայիսից գրում են «Ցնորիս Փուրցելի»-ին, որ ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետ Ալիխանով-Աւարսկին մերժել է «ունկնդրութիւն» տալ քաղաքագլուխ Դ. Ա. Լորդկիպանիձէին և ազնուականութեան պարագլուխ իշխ. Դ. Օ. Նիժարաձէին: Թաթար գեներալն անշուշտ քիթը վեր է քաշել(зазнался):— Ի դէպ, մեզ հաւաստացնում են, և մենք կուզենայինք հերքում ունենալ այս անհաւատալի տեղեկութեան մասին, որ նա իբրթէ հաղիւ կարող է ստորագրել քեր ազգանունը և յաւակնութիւն չունի աւելի շատ գրագէտ լինելու: Գեն. Ալիխանովի գործողութիւնները Թրքական տեսակէտից թերևս գովելի են, իսկ ռուսական տեսակէտից դա ներկայ պատերազմական ժամանակի «ոյժի և գործողութեան» մի փարթամ միրգ է, մինչդեռ օրէնքները, իրաւունքը համեստօրէն մնում են փակուած պահարանի վերին դարակի վրայ, ուր գեներալը նայելու ոչ մի ցանկութիւն չունի:(Русь» № 20):

—

Անհասկանալի հետաքրքրութիւն.— Տեղական լրագրների ասելով, Օդեսայի քաղաքապետը դիմել է քաղաքագլխին հետևեալ առաջարկութեամբ. «Քաղաքային կանոնադրութեան 117-րդ յօդուածի հիման վրայ առաջարկում եմ ձերդ գերազանցութեանը տեղեկութիւններ ներկայացնել ինձ այն մասին, թէ ազգականական ինչ աստիճանի կապ ունին իրար հետ քաղաքագլխի օգնականի պաշտօնի համար ընտրուած Կ. Ի. Անդրէևսկին և քաղաքային վարչութեան անդամ Գ. Ֆ. Նիկիտինը»:

Այս հարցումին քաղաքագլուխը պատասխանել է, որ Կ. Ի. Անդրէևսկին և քաղաքային վարչութեան անդամ Գ. Ֆ. Նիկիտինն ամուսնացած են հարազատ քոյրերի հետ: Ո՞ւմ հետ է ամուսնացած Օդեսայի քաղաքապետը և ինչ ազգականական կապ ունի դրա. Կասուլբարսի հետ: («Русь», № 20)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՐՔԱԿԱՆ ՓՈՔՐՈԳՈՒԹԻՒՆ

ՄԵՂՐԻ, 26 յունուարի.—Գիւնէուզի հայերն այս տարի զգալի մարդկային զոհեր և նիւթական կորուստներ տուին Թուրք խուժանին, որոնց մասին ժամանակին հաղորդել եմ «Նոր-Դար»-ին:

Այսօր շտապում եմ յայտնելու մի քստմնելի դէպքի մասին, որ տեղի է ունեցել մեր հարեան Շիրվանիձոր հայաբնակ գիւղում:

Երեկ գիշեր յունուարի լոյս 25-ին Շիրվանիձորի գոմերի վրայ (բինա) յարձակւում են զինուած թուրքեր և մաս-մաս կտորում չորս հովուի, որոնցից ամենամեծը 18—20 տարեկան է եղել, իսկ մնացածը երեխաներ 14—15 տարեկան: Այնուհետև քշում տանում են մօտ 400 ոչխար և 50 աչաւ տաւար:

Ասում են, որ այս եղեռնագործութեան մասին Շիրվանիձոր լուր բերողն եղել է մի կով միայն, որը պահապանների աղիողորմ, մանկական վայնասուններից խրտնած կապը կտրում է և փախչում դէպի գիւղ...Մարդկային լեզուն է եղել պակասում խեղճ կենդանուն, որ պատմէ շիրվանիձորեցիներին և արար աշխարհին, թէ որպիսի անգթութեամբ են եղել մատնուած իրենց մատաղ և անմեղ պաշտպանները, որոնց չինայեց սակայն բարբարոս թուրքի սուրը...

Երեխաներից մէկը հրաշքով կենդանի է մնացել: Երբ թուրքերը սրի հարուածով կտրում են նրա թևը, նա երեսի վրայ փռւում է գետնին և չուխան ծակում է նրա գլուխը: Զարագործները, մեռած համարելով սրան, միւսներին կտորում են և դարսում առաջնի վրայ ու քշում տաւարը: Իսկ ոմանք պատմում են, որ 20 տարեկան երիտասարդի մօտ մի չախմախլու հրացան է լինում, որով յաջողւում է թուրքերից մէկին սպանել: Ցաւենայն դէպս թուրքերը մի զոհ տուել են և զոհն էլ թուղութեցի է, Շիրվանիձորին շատ մօտ գիւղից:

Գրեցի այն բոլորը, ինչ որ գիտէի. հետևանքի և մանրամասնութեանց մասին ապագայում կը գրեմ, եթէ որևէ զինուածով դարձեալ չի ընդհատուել հաղորդակցութիւնը Մեղրու և Օրդուբաթի միջև:

Գիւնէուզցի հայերիս համբերութեան բաժակը լցուած է:Գիւնէուզցի հայը շատ համբերեց և համբերում է: Նա բարոյականութեան գեղեցիկ դասեր տուաւ իւր դրացուն և այն էլ գործով և ու խօսքով միայն, իսկ վերջինը չհասկացաւ և չհասկանալուց զգալի կերպով պիտի վնասէ թէ իրեն և թէ հային: Թող փաստերը խօսեն:

Անցեալ աշնան վերջերին, բաւական թուով մահմեդական քեարվանեներ Մեկկյայից վերադառնում են: Արաքսով զարտուղի ճանապարհով անցնելիս, զինուորներից հրացանի են բռնւում և ցան ու ցրիւ գալով ապաւինում Գիւնէուզի բարձունքներին: Դէպքը լինում է գիշերը: Քեարվանեներից մէկը իւր կողակցի հետ փախուստ տալիս հեռուից նշմարում է կրակ. քշում է ձին դէպի կրակը թէ փոքր ինչ շունչ առնելու և թէ թրջուած շորերը չորացնելու,հեռուից կանչում է և երբ լսում ու համոզւում է, որ կրակ անողները գիւղացի 8 զինուած որսկաններ են, մտածում է սպանելու կնոջը և փախուստ տալով ազատուելու: Եւ մօքից գործի է եղել ձեռնարկում, երբ երկու հայ որսկաններ մօտենում են, յետ պահում այդ չարագործութիւնից, հրաւիրում նրան կրակի մօտ, խափնջիներ տալիս, իսկ իրենք հեռանում մի այլ տեղ՝ կրակ անում: Լուսաբացին երկու որսորդներ ուղեկցում են նրանց, ապահովութեան համար, մինչև Ալդարա թրքաբնակ գիւղը: Եւ այս այն ժամանակ, երբ Մեղրի - Օրդուբաթեան ճանապարհին, Արաքսի ափին դեռ 3 խողխողուած շիրվանիձորեցիների արիւնը չէր չորացել, իսկ գերեզմանում դեռ տաք էր 14 տարեկան աղջկայ լլկուած դիակը...

Ուրիշ փաստ:

15 թէ 20 օր առաջ երեք պարսկահպատակներ Ղաժարի պղնձահանքից վերադառնալիս են եղել հայրենիք: Շիկահողի և Շիրվանիձորի հայաբնակ գիւղերի մէջ մի խումբ զինուած թուրքեր դրանցից առնում են մի բաւական ստուար գումար, իսկ իրենց ուզում են սպանել և այսպիսով գրգռել իրենց պարսկահպատակ հաւատակիցներին հայութեան դէմ: Վրայ են հասնում մի խումբ շիրվանիձորեցի հայեր, ազատում են պարսկահպատակներին և անցկացնում Արաքսը: 5 թէ 6 օր սրանից առաջ Թուղութ թրքաբնակ գիւղում Պարսկաստանից եկած Ռուստամ անունով մի բէկի և կողոպտուածների ներկայութեամբ քննուեց գործը, տեղական հաշտարար յանձնաժողովի միջոցով: Կողոպտուածները միաբերան պնդում էին, որ իրենց ազատողները շիրվանիձորեցի հայերն են եղել, իսկ փողը դուրս եկաւ հենց նոյն Թուղութում:

Այսպիսի բարոյական դասերը կարծես թէ նպատակայարմար չեն տեղական ոստիկանութեան նախամտածուած ձգտումներին: Տեղական ոստիկանութիւնը իւր գիտաւորեալ, ասենք թէ սխալ տակտիկայով ակընյայտնի կերպով հայ և թուրք տարրերին կռուի է մղում, որի մասին մենք բաւական ապացոյցներ ունենք: Շատերից մէկը:

Ժամանակին գրել եմ «Նոր-Դար»-ին, որ Թուրք-հայկական կոտորածներն սկսած օրից Գիւնէուզի Վարհավար գիւղից թուրքերի ձեռքով քշուեց 500 ոչխար. Տաշտունի գիւղից 360 ոչխար, բացի մանրերը. Շիրվանիձորից տարուեց մի քանի գրաստ և եղերական մահով բռնաբարուեց ու սրախողխող եղաւ մի 14 տարեկան հայ աղջիկ: Այս բոլոր աւազակութեանց թէ հեղինակները, թէ սրանց գործակիցները և թէ տեղերը յայտնի եղան. տեղացին գանգատներ հայերի կողմից և մինչև օրս ոչ մի հետևանք չունեցան և եթէ ունեցան էլ, ահա թէ ինչպիսի:

Գաւառապետ Աւալեանին խոստացաց անպատճառ էկզեկուցիա նշանակել թրքաբնակ Բուղաքար և Վարդանաձոր գիւղերում և էկզեկուցիան, փոխանակ վերոյիշեալ տեղերում նշանակելու, նշանակեց Շիրվանիձորում—այն գիւղում, որն աւելի է տուժել թրքական բարբարոսութիւններից թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Թիվլի թուրքերը, աջակցութեամբ Օխչիի և Փիրդովդանի թուրքերի, քշում են տաշտունցիների ոչխարը. վերջիններս դիմում են իշխանութեան և պատասխան են ստանում, թէ Թիվլին մեր մասումը չէ:

Եւ սրանով էլ վերջանում է հայի գանգատը. բայց մի կարծէք, որ Թիվլին Ֆրանսիայումն է, այլ Կովկ., և այն էլ Տաշտունից 20—30 վերստ հեռաւորութեան վրայ: Երկու թէ երեք ամիս առաջ Կալեր և Շիրվանիձոր հայաբնակ գիւղերի սահմաններում մի թուրքի պատկանող հօտից քշւում է 100—150 ոչխար և սպանում երկու հովիւ. տեղական ոստիկանութիւնը թուրք բէկերի գլուխն անցած բռնի ուժով, ծեծի ենթարկելով հայաբնակ մաղրեցիներին, ստանում է 170 ոչխար և տալիս թուրք բէկերին, այն էլ վերջիններիս ընտրութեամբ. նոյն նպատակով մի ստուար քանակութիւն էլ ստանում է շիրվանիձորեցիներից: Պրիստաւի այսպիսի վարմունքից խրախուսուած, թուրքերն իրենց պահանջին աւելացնում են դարձեալ 100 ոչխար: Այս 100-ի համար էլ ամսիս սկզբըներին նոյն հայազգի պրիստաւ Բագրատ բէկը, որը Թիֆլիսում հըրատարակուող մի թերթում Մեղրուց մի յայտնի թղթակցի գրածով փառաբանուեց, նոյն բէկերի գլուխն անցած Մեղրի եկաւ, մի ժողով գումարեց և պահանջեց, որ մեղրեցիք և ամբողջ Գիւնէուզի մեղուոր և անմեղ տանուտէրութիւնները 100 ոչխարի տեղ 600 րուբլու եղբայրական օգնութիւն անեն, ասելով թէ թուրք բէկերը դրա փոխարէն հակառակ դէպքում կարող են ջնջել Ծաւ և Կեմանց հայաբնակ և սակաւահայ գիւղերը: Եւ այս խօսքերը ասում էր մի պրիստաւ, առանց կարմրելու: Բանն արդէն գլուխ եկած էր. մի տաշտունցի հայ համարձակութիւն առած ասաց հետևեալը.

—Աղա, էն կապոյտ Աստուածն էլ է խմանում, որ այդ ոչխարին մենք գիտակ չենք, բայց որ դու ասում ես՝ մենք քո խօսքից դուրս չենք գալ, միայն թէ խնդիրներս այն է, որ եթէ եղբայրութիւնը, ֆլաս բաժանելը լաւ բան է, մեր կրած վնասներն էլ թուրքերը տան:

Նոյնը պնդեց և մի վաճառականցի, և պրիստաւի ցանկութիւնը ցանկութիւն էլ մնաց:

Այս հանգամանքից զայրացած մեր յարգելի Բագրատ բէկը թէ ինչպիսի հայհոյանքներ թափից խեղճ քըրիստոնեէի ու նրա դարաւոր սրբութիւնների գլխին, այդ կը վկայէ ամեն մի ականատես և որից երես կը դարձնէ ամեն մի փոքր ի շատէ պատուաւոր մարդ: Այսպիսի անյաջողութեան պատահելուց յետոյ պըրիստաւը հեռանում է իւր թիկնապահ բէկերով հանդերձ Մեղրուց, իսկ մի՝ թէ երկու օրից յետոյ վերցնում է Շիրվանիձորից 60 հոգուց բաղկացած կազակային կոմանդան, որն իբրև թէ ուղարկուած է եղել Շիրվանիձոր, վերջիններիս խնդրանօք, իսկ սրանց հեռանալուց մի քանի օր յետոյ տեղի է ունենում վերոյիշեալ պարսկահպատակների դէպքը, իսկ 22 օր յետոյ պարզ արամաբանութեամբ տեղի է ունենում թղթակցութեանս մէջ յիշուած մանուկների կոտորման դէպքը:

Աւետիս Աղասեան

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

Հակա-Եւրոպական շարժումը Չինաստանում.—Հակառակ չինական դիւանագիտական բարձր շրջանների վստահացումներին, Չինաստանի մի քանի մասերում հակաեւրոպական շարժումը շարունակւում է անհանգստացնել այդ երկրում առևտրական և գաղթականական շահեր ունեցող եւրոպական կառավարութիւնները, մանաւորապէս Միացեալ-Նահանգները: Ֆրանսական «Matin» թերթի Նիւ-Եորկի թղթակիցը գրում է իւր թերթին, թէ Ուաշինգտոնից այդտեղ ստացուած տեղեկութիւնները խիստ վրդովեցուցիչ են և Միացեալ-Նահանգների կառավարութիւնը սաստիկ անհանգստացնում են այն բոլորը, ինչ որ ներկայ րոպէիս կատարւում է Չինաստանում: Արտաքին գործերի մինիստրութիւնը վերջին օրերս հրատարակել է այդ երկրում գտնուող իւր երկու գործակալների տեղեկագրերը: Այդ տեղեկագրերի մէջ առաջ բերուած հաշուետուութիւնից պարզ երևում է, որ ամերիկական գործարանների ապրանքների դէմ չինացիների յարուցած բոյկոտը գլխաւորաբար առաջ է եկել չինացի ուսանողների ստիպմունքների ու գրգռմունքների ազդեցութեան տակ: Այդքան զգալի յաջողութիւն նրանք կարողանում են ունենալ շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք մեծ համարում ունեն չին ժողովրդի մէջ:

Բացի այդ, Սան-Ֆրանցիսկոյից ստացուած տեղեկութիւնների համաձայն, Ծայրագոյն-Արևելքից այդ նաւահանգիստն եկող ճանապարհորդները պատմում են, որ Շանհայում ծագած վերջին անկարգութիւնները, որոնք բացառապէս ուղղուած էին եւրոպացիների դէմ, նոյնպէս նախապատրաստուած են եղել չինացի ուսանողների ու գիտնականների ձեռքով:

—

Անգլիական պահպանողականները պառակտւում են.—Անգլիական պահպանողական կուսակցութիւնը չի կարողանում մարսել այն անսպասելի պարտութիւնը, որ կրեց վերջին ընտրութիւնների ժամանակ: Կուսակցութեան կրած այդ հարուածն ստիպում է նրա բոլոր պարագլուխներին լուրջ կերպով զբաղուելու կուսակցութիւնը զօրեղացնելու հարցով, միացնելով կուսակցութեան բոլոր ֆրակցիաներն ի մի: Փետրուարի 16-ին (ն. տ.) Լոնդոնում տեղի է ունեցել պահպանողական կուսակցութեան միտինգը նախագահութեամբ լորդ Բալֆուրի: Միտինգին մասնակցում էին կուսակցութեան վեց հարիւրից աւելի անդամները, և խորհրդածութեան առարկան էր կուսակցութեան ապագայ գործունէութիւնը: Ճառեր են արտասանում Բալֆուրը, Ջեմբերլէնը, լորդ Սէսիլը, Դեւոնշիրեան հերցոգը և ուրիշներ: Ամենքի ճառերի բովանդակութիւնն ևս համարեա միևնոյնն էր, այն է՝ զօրացնել ու կազմակերպել կուսակցութիւնը:

Բալֆուրը, ծանրանալով պահպանողականների ընդհանուր ընտրութիւնների ժամանակ կրած պարտութեան վրայ, պատկերացնում է այն այսպէս. «Մենք ներկայումս գտնում ենք խիստ դժուարին կացութեան մէջ: Ճշմարիտ է, մենք զօրեղ մեծամասնութիւն ունենք լորդերի պալատում, սակայն դրա փոխարէն այժմ փոքրամասնութիւն ենք կազմում համայնքների պալատում, ուր ընդամենը 157 անդամ ունենք: Անհրաժեշտ է, որ այդ 157 հոգին ներկայացնի իրօք զօրեղ ընդդիմադիր ոյժ և կարողանայ ցոյց տալ, որ իրենք թէև սակաւամիւ են, սակայն ունեն միանգամայն որոշ, մեկին քաղաքականութիւն: Դրանումն է կայանում մեր միակ ոյժն ու միջոցը, որով պէտք է կարողանանք երկրի հասարակական կարծիքը փոխել կուսակցութեան նկատմամբ և այդպիսով նախապատրաստել մեր ապագայ յաջողութիւնը հետևեալ ընտրութիւնների համար»:

Այս միևնոյն միտինգի ժամանակ է, որ Բալֆուրն ընտրուել է կուսակցութեան պարագլուխ:

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

13 փետրուարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ի նկատի կայ Պետերբուրգի, Վարշաւի, Վորոնէժի, Խարկովի, Մոսկուայի, Կամըշինսկու, Տամբովի և Ուրալսկու երկաթուղիական վարչութիւնների ոստիկանական ու ժանդարմերիական կազմը ընդարձակելու:—Ներքին գործերի մինիստրութիւնը պետական խորհրդին առաջադրութիւն է արել 1892 թ. քաղաքային կանոնադրութեան 45-րդ յօդուածը լրացնել մի ծանօթութեամբ, որով մինիստրի իրաւունքին թողնուի քաղաքային խորհուրդների միջնորդութիւն յարուցած դէպքերում՝ իրաւունք տալ ընտրութիւններին մասնակցելու տանտէրերով, պայմանով որ տէրերն իրենք անձամբ ներկայացնեն իրենց տամսերն ընտրողական ժողովների նախագահներին: Ընտրուած են համարւում այն անձերը, որոնք ամենից աւելի ձայն են ստանում: Հաւասար ձայներ ստացած դէպքում ընտրութիւնը կատարւում է վիճակահանութեամբ: Այդ առաջադրութիւնը պետական խորհրդում խորհրդածութեան պէտք է առնուի փետրուարի 18-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մաքսերի գործերի գլխաւոր վարչութեան խորհրդի անդամ Աղիկաևսկին, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի խորհրդի անդամ Բարանովը և պարսկական արքունիքում գտնուող արտակարգ դեսպան և լիազօր մինիստր Շպէյերն արձակւում են իրենց պաշտօններից համաձայն իրենց խնդրի:

ԲԵՐԼԻՆ.—Արքունիքում եղած ընդունելութեան ժամանակ պրինց Ալբէրտը կայսերական զոյգի արծաթեայ հարսանիքի առիթով նաւատորմղի անունից շնորհաւորում է վեհապետներին, ինչպէս նաև կայսրի որդու պսակադրութեան առիթով: Վիլհելմ կայսրը իւր պատասխան ճառի մէջ մատնացոյց է եղել, որ պրինց Ալբերտը իւր մէջ պատկերացնում է կայսրութեան վերակազմութեան փառաւոր ժամանակամիջոցը: Ցամաքային ու ծովային զօրութիւնները,—շարունակել է կայսրը,—կազմում են իմ առաջին ու վերջին մտածմունքս, իսկ կայսրուհին միշտ էլ ներշնչուած է եղել դէպի կարիքն ու հիւանդութիւններն ունեցած զգացմունքով: Տայ Աստուած, որ պատերազմ չը ծագի, իսկ եթէ վրայ հասնելու լինի, ես խորապէս համոզուած եմ, որ զօրքը կարող կըլինի իւր ոյժը ցոյց տալու այնպէս, ինչպէս նա ցոյց տուեց 35 տարի սրանից առաջ:

ՊԵԿԻՆ.—Աչքի առաջ ունենալով փետրուարի 11-ին սպասուած անկարգութիւնների մասին տարածուած լուրերը, ձեռք են առնուած զգուշական յատուկ միջոցներ: Ոստիկանութեան և ուրիշ պաշտօնատար բարձր ներկայացուցիչներ անակնկալ կերպով պալատ են կանչուել: Խորհրդածութիւնից յետոյ, քաղաքի փակ մասի շուրջը գտնուող պահպանութիւնը կրկնապատիկ ուժեղացուած է և իշխանութեան բարձրագոյն ներկայացուցիչների բնակարանների մոտերը զօրքեր են կանգնեցուած: Սակայն, քաղաքը բոլորովին հանգիստ էր, ոչ մի անկարգութիւն տեղի չի ունեցել:

ԻՐԿՈՒՏՍԿ.—Տեղս հասաւ Լինևիչը:

ԼԻԲԱՒԱ. — Ծայրագոյն-Արևելքից սպասւում է «Аврора» յածանաւը:

ՊԼՈՆՍԿ.—Տեղի ունեցան քրիստոնեաների նախընտրական ժողովները: Հրէաները, որոնք քաղաքի բնակչութեան երեք քառորդական մասն են կազմում, խորհրդակցում են առանձին:

ԲԵՐԼԻՆ.—Փետրուարի 12-ին կայսերական զոյգին բոլոր պատգամաւորութիւնների կողմից բարեգործական նպատակով յանձնուած դրամի բովանդակ գումարը հասնում է $2^1/_2$ միլիոն մարկի:

14 փետրուարի

ՄՈՍԿՈՒԱ.— Հոկտեմբերի 17-ի միութեան երեկոյեան նիստում քըննուեցին հողային հարցի մանրամասնութիւնները: Խոմեակովի առաջարկութեամբ համաժողովը հողային հարցը համարեց պետական կարևորութիւն ունեցող մի հարց, որի վճռաման ժամանակամիջոցը կախումն ունի այդ հարցի մանրամասնութեան լըջմիտ կերպով մշակելուց, որը պէտք է կատարուի տեղական կոմիտեներում, յանձնուելով դրանց համաժողովի այդ մասին ունեցած նիւթերն ու արած քննութիւնները: Շիպովի ու Պլեւակոյի արտասանած ճառերից յետոյ, համաժողովը յայտարարուել է փակուած:

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.— (Ռէյտեր): Անդ-

լիական Թագուհին առաւօտեան մեկնեց դէպի Լոնդոն։ Կայսրան նրան ճանապարհ դնելու էր եկել արքայական ամբողջ ընտանիքը։

ՍԻՄԲԻՐՍԿ.—Բոլոր գաւառներում շուտափոյթ յանձնաժողովներ են կազմւում հողային անկարգութիւնների ժամանակ կալուածատէրերի կրած վնասները հաշուելու և փոխարինելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պուտիլովսկի գործարանի տեսչի օգնական Իժեներ Նազարովի վրայ հինգ անգամ ատրճանակ է արձակուած, որից նա ընդմանուել է։ Սպանողն անյայտ է։

ՕՉԱԿՈՎ.—Վկաների հարցաքննութիւնը վերջանալու վրայ է, վաղն սկսուելու են վիճաբանութիւնները. դատավճիռը, հաւանականաբար, կը ծանուցուի հինգշաբթի։ Իրական ցուցմունքներ են տալիս այն նաւաստիները, որոնք ուղարկուած են եղել Շմիդտի մօտ որպէս պատգամաւորներ՝ նրան հրաւիրելու միտինգին մասնակցելու համար. այդ միտինգի մէջ, արտասանած ճառի մէջ Շմիդտը նաւազօրքը խաղաղութեան է հրաւիրել։ Դրանից յետոյ, Շմիդտն ընկեր եղել, արեց մի բանախօսութիւն, ուր նա բացատրեց իւր քաղաքական հայեացքները։

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ.—Ըստ երեկոյեան օտարլեզու մի աւազակախումբ յարձակուել է գործել պետական բանկի գրասենեակի վրայ և սպանել է այդտեղի ծառային։ Զինուորականներից մէկը, որն ուզել է դիմադրութիւն ցոյց տալ, վիրաւորուած է։ Կողոպտիչները, ատրճանակները ձեռքներին պաշտօնեաներին մահ սպառնալով, յափշտակել են 75,000 րուբ. ու անյայտացել։ Յափշտակուած դրամի 35000-ը պատկանելիս է եղել ֆինլեանդական ակցիօներական միութեան բանկին։ Աւազակները ներկայ եղողներին ստիպել են ձեռքերը վեր բարձրանել, սպառնալով հակառակ դէպքում րոպէապէս գնդակահար անել, վերջին գումարը խլել են մի կնոջից, որին այդ փողը բերած է եղել ֆինլեանդականի վերածելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Պաշտօնական։ Մինչև փետրուարի 12-ը ստացուած տեղեկութիւնների համաձայն, 50 նահանգներում և Դոնի կազակների շրջանում արդէն հրատարակուած են և կամ մինչև փետր. 22-ը հրատարակուելու են ընդամենը քաղաքային ընտրելիների 419 ցանկ, 419 գաւառական կալուածատէրերի և 8 ցանկայն քաղաքների, որոնք Պետ. Դումայի ընտրութիւնները կատարում են նահանգներից բաժանուած։ Ընդ սմին 22 նահանգների բոլոր ընտրողների բոլոր ցանկերը հրատարակուելու են փետր. 15-ին, իսկ 10 նահանգները—փետր. 12-ին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— Թնդանօթային պահեստից գողացուած է հինգհարուածեան մի թնդանօթ, առանց պատուանդանի, 14 պուդ ծանրութեամբ։

ՎԱՐՇԱՒ.—Կէս գիշերուայ արտակարգ գնացքով դէպի Պետերբուրգ է ճանապարհ ընկել ընդ. նահանգապետ Սկալոնը։

ՎԵՆՆԱ.—Պարոնների պալատն ընդունել է Իտալիայի, Ռուսիայի ու Ռնգարիայի հետ եղած առևտրական դաշնագրերը։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ.—(Ասսոսիե Պրեսս)։ Շանգհայի աւագ հիւպատոսը հաղորդում է, որ երեկ Նանչանգում սպանուած է վեց ֆրանսացի յիսուսեան և երկու ամերիկացի։ Զինական զօրքերը պաշտպանութիւն են ցոյց տալիս Կուձեանից փախածներին ու միսիօնարներին. այդտեղ ուղարկել է ամերիկական թնդանօթաձիգ նաւ։ Շանգխայում բոլորովին հանգիստ է։

ԹԷՈԴՈՍԻԱ.—Փետր. 12-ի գիշերը յափշտակուած է Հին-Ղրիմի քաղաքային վարչութեան դրամարկղը։ Այսօր ջախջախուած նոյն դրամարկղը գտնուել է Կարադեօզ գիւղի մօտերը։ Յափշտակուած են դոկումեն տներ ու 1000 ր. դրամ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.-Արդարադատութեան մինիստրութեան աւագ խորհրդական Վերեովկինը նշանակուած է արդարադատութեան մինիստրութեան առաջին դեպարտամենտի տեսչի պաշտօնակատար։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Շաբաթ օրը տեղի ունեցած քաղաքային խորհրդի նիստում ոստիկանութեան նախագահ Ռուդնայ միմիայն քաղաքագլխի, քաղաքային խորհրդի երկու-երեք անդամների և բազմաթիւ ոստիկանների ներկայութեամբ կարդաց արքայական մի խիստ յայտարարութիւն, որով դատապարտւում է քաղաքային խորհրդի գործողութիւնների եղանակը կառավարութեան վերաբերմամբ և յայտարարւում, թէ որովհետև ի զուր փորձ է անւում քաղաքային ներկայացուցչութեան գործունէութիւնն ուղղել արքայական իշխանութեան դէմ, այդ պատճառով թագաւորը Ռուդնային նշանակում է Բուդապեստի արքայական կոմիսար և նրան անսահման իրաւունք է տալիս փակելու քաղաքային խորհրդի և ամեն տեսակ յանձնաժողովների նիստերը, գործադրելու ընդհանուր ժողովների բոլոր իրաւունքները, պաշտօնանկ անելու քաղաքային ծառայողներին, քննութիւն նշանակելու անհնազանդների գործողութիւնների համար և նրանց տեղը վերջնականապէս ուրիշ մարդիկ նշանակելու։ Այնուհետև Ռուդնայը և ոստիկանները հեռացան։ Հինգ րոպէից յետոյ նիստը նորոգուեց յայտարարութեան ընթերցման ժամանակ բացակայ անդամների ներկայութեամբ։ Միաձայն ընդունուած է ատենաքաղաքագլխի առաջարկը, որով մատնանիշ է անում արքայական իշխանութեան սահմանները, ասում է, որ արքայական լիազօր կոմիսարն իրաւունք չունի զաւթելու հայրենի կառավարութեան իշխանութիւնը։ Պարլամենտի ապօրինի արձակումը և լիազօր կոմիսարների նշանակումը սահմանադրութեան դադարեցման նշաններ են հանդիսանում։ Քաղաքային խորհուրդը բողոքում է վերջնիս դադարեցման դէմ, կոմիսարի հրամանները համարում է ապօրինի և ոչ պարտադիր, ապաւինում է թագաւորի առ ունգարական ազգը տածած սիրոյն և ազգի համերաշխ գործունէութեանը յօգուտ սահմանադրական Ունգարիայի և ի բարգաւաճութիւն նրա ազգութիւնների։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Բարձրագոյն ուկազով Պետական Դումայի բացման օրը նշանակուած է ապրիլի 27-ին։

ՄԱԿՕՑ (Սոնի և Լուարի դեպարտամենտ).—Ներքին գործերի մինիստրը Դուբիեր մի ճառի մէջ այստեղ մատնանիշ արաւ, որ կառավարութիւնը եկեղեցին պետութիւնից բաժանող օրէնքը կը գործադրէ առանց նայելու այն ոճրային դիմադրութեանը, որին դիմելու կոչում է անում պապի շրջաբերականը։

ՊԱՐԻԶ. — Պատգամաւորների ժողովը քննում էր զինուորական մինիստրութեան բիւջէն։ Վիճաբանութիւնների ժամանակ զինուորական մինիստրը, պատասխանելով հարցապնդման, ասաց, որ պատերազմի դէպքում պահեստին կամ տերրիտորիալ զօրաբանակին պատկանող պատգամաւորներն ու սենատորները կմիանան զօրքերին՝ հետ սպառազինման ուիթերորդ օրը։ Մինիստրն աւելացրեց, որ կառավարութիւնն այժմս զբաղված է պատերազմի ժամանակ քաղաքացիական ադմինիստրացիա կազմակերպելու, ծրագիր մշակելու։

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ.—Երեկ մանելով պետական բանկը, կողոպտիչները բարձրաձայն աղաղակեցին ռուսերէն. «Յանուն ռազմական կազմակերպութեան գրաւում ենք դրամարկղը. ձեռքները վերև»։ Փակելով ամենքին մութ նորա սենեակում, աւազակները յափշտակեցին 170, 700 ր. ռուսական ու ֆիննական փողեր և տոկոսների թղթեր։ Ոստիկանութիւնն սկսել է եռանդուն կերպով որոնել նրանց։

Կ.ՊՈԼԻՍ.—Գլխաւոր վերատեսուչ Հիլմի-փաշան վճռել է ռեգիֆներ ուղարկել այն տեղերն, ուր ալբանական շարժում կայ։ Ալբանացիները պահանջում են ներում շնորհել Ռիզա-բէյին։

ԻՐԿՈՒՑԿ.—Փետրուարի 13-ին երեկոյեան Մեծ փողոցում սպանուած է Իրկուտսկ-Մոսկովսկայա կայարանի կոմենդանտ բարոն Կորֆ։

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՃՈԳԵՆԱՒԵՐ
РУССКОЕ ОБЩЕСТВО Пароходства и Торговли

1. Նաւերը դուրս են գալիս Բաթումից

ա. ՊՕՍՏ-ՄԱՐԴԱՏԱՐ ՆԱՒԵՐ ՄԻՆՉԵՒ ՕԴԵՍՍԱ

1) Շրջանաւոր ուղղութիւն երեքշաբթից լոյս չորեքշաբթի
2) Նոյնպէս, հինգշաբթից լոյս ուրբաթ
} Գիշերուայ ժ. 2-ին մանելով բոլոր նաւահանգիստները։

3) Ուղիղ ճանապարհով։ Շաբաթից լոյս կիրակի, գիշերուայ ժամը 2-ին, Սուխումի Գագրայի, Սոչիի, Նովոռոսսիսկի, Ֆէոդոսիայի, Եալթայի և Սևաստոպոլի նաւահանգիստներով։

բ. ՄԱՐԴԱՏԱՐ,

Երկուշաբթի և շաբաթ օրերը, երեկոյեան ժամը 9-ին, շրջանաւոր ուղղութեամբ, մտնելով բոլոր նաւահանգիստները։

գ. ԱՊՐԱՆՔԱՏԱՐ ՆԱՒԵՐ

Հինգշաբթի և կիրակի օրերը, կէս գիշերին։

2. Նաւերը գալիս են Բաթում

ա. ՊՕՍՏ-ՄԱՐԴԱՏԱՐ ՆԱՒԵՐԸ

Շրջանաւոր ուղղութիւն, հինգշաբթի և չորեքշաբթի երեկոները։

Ուղիղ ճանապարհով—ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 8-ին։

բ, ՄԱՐԴԱՏԱՐ ՆԱՒԵՐԸ.

Կիրակի և ուրբաթ երեկոները

գ. ԱՊՐԱՆՔԱՏԱՐ ՆԱՒԵՐԸ

Հինգշաբթի և շաբաթ առաւօտները

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ.
(Սոլոլակ, Բեբուտովսկայա փողոց, № 64 սեփական տուն)
Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնը երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ժամը 2-4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մասնաւոր ընդունելութիւն ամենայն օր, ժամը 9-10 առաւօտեան. վճարը 2 ր.։ Ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգի։ Զանազանները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունքը՝ մանուկները վճարում են 1ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուագիշերուայ համար, ծննդաբերական բաժանմունք մանուկները 1-5 ր. մի օրուագիշերուայ համար։ Երկուսից ազատուել 10-50 ր.։ Անդամատութիւն ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Զանազանների համար 1 ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և սրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։ Հիւանդանոցի տէր և տեսուչ

Մ. ՄԿՐՏՉԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամը 9-ից մինչև 12
Երեկոյեան » » 5-ից » 8
Վելեամինովսկայա փողոց № 7

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՀԻՒՐԱՆՈՑ
ԱՆԳԼԵՏԵՐ
ՀԻՒՐԱՆՈՑԻ ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ

ճաշ՝ 2 տես. կերակուր — 50 կոպ.
ճաշ՝ 3 » կերակուր — 60 կոպ.
ճաշ՝ 4 » կերակուր — 80 կոպ.

Նախաճաշիկ և ընթրիք—ցուցակով։

Հիւրանոցում կահաւորուած սենեակներ— 1 րուբլուց սկսած։

ՕՄՆԵՑԵՏՐ։

10—6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ՍՏՈՒԿԵՆ եւ ԸՆԿ.
ԲԱԳՈՒ

Իւր [illegible] մշտապէս ունի

Երկաթ ամեն տեսակի և ձևի (Листовое, резервуарное, сортовое, фасонное, кровельное и оцинкованное) երկկոտանի երկաթէ գերաններ, Ջրհան մեքենաներ «Կամերոն» և «Դուպլեքս», ռուսական գազային խողովակներ և դրանց զօդաւորող մասեր, փիտինգներ և այլն։ Դուրգեր զանազան տեսակի (станк токарные, сверлильные, строгальные и др.)։ Մամուլներ ծակող և ուրիշ-տեսակներ։ Պողպատ՝ զուբեր, կորոցներ և գործիքներ շինելու համար։ Մետաղեայ փոկեր, աղիւս անձալ (огнеупорный), «Գլէնբոյգ» և կաւ, բեւեռներ)заклепки котельныя пистонныя)։ Գամեր զանազան տեսակի, պտուտակներ (болты) և գայկաներ, պղինձ թերթաւոր և կտորներով, պղնձէ խողովակներ, թուջէ ասֆալտած (асфалтированныя) խողովակներ ջրուղիների համար և դրանց զօդաւորող մասեր։ Անագ ձողաւոր, արճիճ թերթաւոր և կտորներով, ցինկ թերթաւոր և այլն։ Պարագաներ (арматура) պղնձեայ, բրոնզեայ ձուլածոյ։ Գործիքներ զանազան տեսակի, բեւեռէ տարիկաներ, ցեմենտ, նմանապէս տեխնիքական ամեն տեսակի մետաղներ և իւղեր։

Ներկայացուցիչն է
ՌՈՒՍՏՈՆ ՊՐՈԿՏՈՐ և ԸՆԿ.
Շոգեմեքենաներ
Կերոսինեայ } շարժիչ մեքենաներ
Նաւթեայ
Շոգեսարքեր (локомобилы)
Արքուկներ (катки для шоссе)
ՌԻՔԱՐԴ ՄԱՅԵՐ
Ներկեր զանազան տեսակ
Արճճեայ ճերմակուց (бѣлила)
Արճճեայ սուսր (сурикъ)

ԳԵՐՄԱՆ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՆՆԵՍՄԱՆԵԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ
Միակ ներկայացուցիչը

Խողովակները առանց կարի, գազեայ, նաւթահորերի, ծխնելուզի և ջրաբաշխական։ Նմանապէս և ամրակուռ խողովակներ խտացուցիչների համար (компрессоръ)։

Կայմեր (мачты) անկար խողովակներից, էլեքտրական ուղիների լուսաւորութեան և այլ շինուածքների համար սիւներ հեռախօսական, հեռագրական լարերի և շանթարգելների համար։

Ընդունում է լիովին կառուցումն տախտակի, բուրգ լուանող և ուրիշ գործարանների. նմանապէս ընդունում է պատուէրներ այլ և այլ տեսակ տեխնիքական պիտոյքների վերաբերեալ։

Իւրաքանչիւր հարցերին պատասխանում է անմիջապէս։

Արժէքների ցուցակները ուղարկւում են ձրիաբար։ (կ.) 52—8

Մինչ 1906 թ. Յունուարը լոյս են տեսել
ԳՐԻԳՈՐ ՃԱՀՔՈՒԴԱՂԵԱՆԻ
հետևեալ աշխատութիւնները՝

Ա. Մանկավարժական՝

1. ՋՕՆ ՍՏԻՒԱՐՏ ԲԼԷԿԻ, պրոֆէսոր. «ՄՏԱՒՈՐ, ՖԻԶԻՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ» (երկրորդ տպագրութիւն, 60 կ.
2. Ֆ. ԲԱՄԲՈՒՍՕՆ, պրոֆէսոր. «ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ» . . . . . 40 կ.
3. ԼՈՒԻԶԱ ԲԻՒԽՆԷՐ. «ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ» 40 կ.
4. Ա. ԳԱԲՐԻԷԼԻ. պրոֆ. «ԲՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ» 60 կ.

Բ. Գրական՝

1. Գ. ԷԲԵՐՍ՝ «Փարաւոնի աղջիկը» պատմ. վէպ. . . . . 80 կ.
2. ՄԱՐԿ ՏՈՒԷՆ. «Իշխանն ու աղքատը» պատմ. վէպ. . 1 ռ. — կ.
3. ԷԴԳԱՐ ՊՕ. «Ոսկի բզէզ» ժողովրդական վէպ. . . . . 20 կ.

Գ. Մանկական՝

1. ԲԱՌԻԷՆ. «Փայլուն կոպէկ» երկրորդ. տպագ. . . . . 25 կ.
2. ԱՆԴԵՐՍԷՆ «Անդամալոյծ» . . . . 15 կ.
3. ՏՕՊԵԼԻՈՒՍ «Արծաթ մանեկի պատմութիւնը» . . . . 15 կ.
4. ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ «Օմալ» . . . . 8 կ.

—

Մամուլի տակն է և շուտով լոյս կը տեսնի կոմս Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ՝ «ԱՍՍԱՐԽԱԴՈՆ» Թագաւոր Ասորւոց. պատմական վէպիկ

Ճանապարհածախսը թարգմանչի վրայ։ Տասն օրինակ գնողներին տրւում են 20% զեղչ.

Ցանկացողները դիմում են Թիֆլիսի գրավաճառներին և թարգմանչին հետևեալ հասցէով՝—Учителю Григорію ШахъБудагянцъ, Шереметьевская улица, соб. домъ (10 участ.) Дидубе. 15—3

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1906 ГОДЪ
на ежедневную, политическую, литературную и экономическую газету

„НОВОСТИ"

(Подъ редакціей О. К. НОТОВИЧА).

вмѣстѣ съ ЕЖЕНЕДѢЛЬНЫМЪ иллюстрированнымъ, художественнымъ и литературнымъ журналомъ:

„Петербургская жизнь".

заключающимъ въ себѣ, кромѣ литературно-художественныхъ отдѣловъ:

Медико-гигіеническое обозрѣніе
(Эскулапъ).
Техническое обозрѣніе.
(Новѣйшія открытія и изобрѣтенія, успѣхи пром. и торг. въ связи съ успѣхами наукъ, просвѣщенія и техники).

Новѣйшія моды и спортъ
и Естественно-научное обозрѣніе.
(„Природа и хозяйство": естеств. науки, сельское хозяйство, садоводство и т. п.).

Обширные матеріалы по гигіенѣ, домоводству, сельскому хозяйству, техникѣ и, вообще, для цѣлей самообразованія.

ВЪ ГАЗЕТѢ и ЖУРНАЛѢ ПРИНИМАЛИ и ПРИНИМАЮТЪ УЧАСТІЕ:

Агафонъ, В. К.—Анненкова-Бернаръ, Н. Н.—Антроповъ, Р. Л.—Арепьевъ, Н. Ф.—Ассъ, М. М.—(Левъ Максимъ),—Баранцевичъ, К. С.—Кн. Барятинскій, А. В.—Бентовинъ, Б. И.—Бересъ, А. А.—Билибинъ, В. Б.—Бирюковичъ, В. В.—Ллохъ, Г. А.—Бердинъ, Д. Н.—Быстровъ, Н. И.—Бѣловъ, В. Д.—Варенцовъ, А. Н. (Таежный).—Василевскій, И. Ф. (Буква).—Ватсонъ, М. Б.—Вейнбергъ, П. И.—Вейнбергъ, А. А.—Венгеровъ, С. А.—Венгерова, З. А.—Веселовская, А. А.—Веселовскій, А. Н.—Веселовскій, Ю. А. Гликманъ, Д. И. Городецкій, М. Б.—Гольденблюмъ, А. И. Гольдгаммеръ, Д.—Грейденбергъ, Б. С.—Далматовъ, В. П.—Дембо, Г. И.—Елпатьевскій, С. Я. Исаевъ, А. А.—Катловкеръ, Б. А.—Карабчевскій, Н. П.—Кирпичниковъ, С. Д.—Кузьминъ-Караваевъ, В. Д.—Климертъ, М. Н.—Красновъ, Пл. Н.—Кюи, Ц. А.—Лединъ, И. П.—Лесманъ, А. М.—Ломброзо, Чезаре, Лондонъ, Д. В.—Мантегацца, Паоло,—Матюшенскій, А. П.—Мельницкая, Л. В.—Модестовъ, В. И.—Морозовъ, П. О.—Мунштейнъ, (Lolo),—Недзвѣцкій, В. И.—Немировичъ-Данченко, В. И.—Никитинъ, В. Н.—Никольскій, Л. Н.—Новиковъ, А. И.—Оршанскій, И. Г.—Плющикъ-Плющевскій, Я. А. Покровская, М. И.—Полонскій, Л. А.—Пругавинъ, А. С. Пэкъ, В. А.—Раппопортъ, С. И.—Рославлевъ, I.—(Псевд.).—Свирскій, А. И.—Сильчевскій, Д. П.—Скабичевскій, А. М.—Слоложанинъ, Е. Д.—Соллогубъ, Өедоръ.—Спасовичъ, В. Д.—Старцевъ, Г. Е.—Стабесовъ, В. В.—Субботичъ, А. П.—Сумбатовъ, кн. А. И.—Тамъ,—Толстой гр. Л.—Трачевскій, А. С.—Трозинеръ, Ө. Ө.—(Мечтатель),—Фальковскій, Ф. Н.—Фирсовъ, Н. Н.—(Рускинъ),—Фламмаріонъ, Камиллъ—Хирьяковъ, А. М.—Чюминъ, О. Н.—Шапировъ, Б. М.—Шапиръ, О. А.—Шумковъ, В. В.—Эрастовъ, Г. М.—фросъ, Н. Е.

Съ цѣлью сдѣлать 1-е (большое) изданіе „НОВОСТЕЙ" доступнымъ для болѣе широкихъ круговъ читателей
ЦѢНА ЭТОГО ИЗДАНІЯ
ПОНИЖЕНА на 5 руб.—съ 17 руб. до 12 руб.
для городскихъ и иногороднихъ подписчиковъ

ПОДПИСНАЯ ЦѢНА.

I-го (большого) изданія	II-го (малаго) изданія
для городскихъ и иногороднихъ: На годъ 12 р., 11 мѣс. 11 р. 25 к., 10 мѣс. 10 р. 75 к., 9 мѣс. 10 р., 8 мѣс. 9 р., 7 мѣс. 8 р., 6 мѣс. 7 р., 5 мѣс. 6 р., 4 мѣс. 5 р., 3 мѣс. 4 р., 2 мѣс. 2 р. 70 к., 1 мѣс. 1 р. 40 к.	для городскихъ подписчиковъ: На годъ 6 р., 6 мѣс. 3 р., 3 мѣс. 1 р. 50 к., 1 мѣс. 60 к.
за границу: На годъ 20 р., 11 мѣс. 19 р., 10 мѣс. 18 р., 9 мѣс. 17 р., 8 мѣс. 15 р., 7 мѣс. 13 р., 6 мѣс. 11 р., 5 мѣс. 10 р., 4 мѣс. 8 р., 3 мѣс. 6 р., 2 мѣс. 4 р., 1 мѣс. 2 руб.	для иногороднихъ подписчиковъ: На годъ 7 р., 6 мѣс. 3 р. 50 к., 3 мѣс. 1 р. 75 к. 1 мѣс. 60 к.

Подписка принимается только съ 1-го числа каждаго мѣсяца.

Подписка на 1 годъ считается только съ 1-го января по 1-е января.

РАЗСРОЧКА допускается только на I-е изданіе съ 1 января на годъ; при подпискѣ—4 руб., въ мартѣ—4 руб. и въ іюлѣ 4 р. При подпискѣ на время менѣе года разсрочка недопускается.

Отдѣльная подписная цѣна журнала „ПЕТЕРБУРГСКАЯ ЖИЗНЬ":
безъ доставки и пересылки: на 1 годъ—5 руб., на 6 мѣс.—3 руб. на 3 мѣс.—1 руб. 75 коп. Съ доставкою и пересылкою: на 1 годъ—6 руб., на 6 мѣс.—3 руб., на 2 мѣс. 1 руб.

Подписныя деньги присылаются, по возможности, почтовыми переводами, по адресу: Главной Конторы газ. „НОВОСТИ" Спб. Кирочная 24.

Городская контора газ. „НОВОСТИ". Спб., Невскій пр., 30. Телефонъ 787.

Редакторъ О. К. Нотовичъ. **Издатель Ю. Б. Бакъ.**

5—3.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅՈՅՍ
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Տարեկան բաժանորդագինն է Թիֆլիսում 3 ր. կէս տար. 1ր. 50կ. ամիսը 30 կ, Ռուսիայում 4 ր. կէս տար. 2 ր, ամիսը 40 կ. արտասահմանում 10 ֆրանկ։ Հասցէն՝ Тифлисъ—Редакція иллюстрированнаго журнала Уйсъ" Сурпъ-Нишанская ул. № 11. Թիֆլիսում բաժանորդ են գրւում Խմբագրատան կամ Արքունական թատրոնի դիմաց պ. Բ. Նաւասարդեանի „О. Бонъ Марше" մագազինում։

Առաջին համարներից կըսկսուի տպագրուել «Անիի կործանումը» պատմական վէպի Բ. մասը։ Նոյն գրքի առաջին մասը տպագրուած Պարիզում կըստանան մեր տարեկան բաժանորդներն անցած յունուար և փետրվար ամիսների փոխարէն։

«Յոյս»ը հրատարակւում է յուսահատ, ճնշուած և անօգնական մարդկանց համար։

Նա պիտի լինի ապաւէն պորտաբոյծ ձրիակերներից, հասարակ հրատարակողներից հալածուածներին, տանջուածներին և արիւնաքամ եղած անհատներին։

Նա պիտի աշխատի փրկութեան խարիսխ լինել այս յուսաբեկ կեանքի փոթորկոտ և լեռնացած ալիքներից խորտակուող նաւերին, միջոց տալով նրանց հասնել անքոյթ ապաստան և նա պիտի [illegible] տանող դէպի ինքնավստահութիւնն ու աննենգ մաքրութեան սուրբ սէր դէպի իւր նմանն։

Հաւատ, յոյս և սէր, այդ—պիտի լինի մեր նշանաբանը և այդ ուղիով մենք պիտի ընթանանք առաջ և [illegible] ու [illegible]։

Խմբագիր-հրատարակիչ Բագրատ Այվազեանց